թյունը: Այս նամակը գրված է 1839-ի հոկտեմբերի
9-ին: Ուրեմն հոկտեմբերի առաջին որերին միայն
Աբովյանը տեղյակ յեղավ գիտական շարադրություն
ներկայացնելու անհրաժեշտության մասին: Պաշտոնի
հետ կապված ծով պարտականությունների մեջ
Աբովյանի համար իրոք վոր շատ գժվար եր մտածել
դիսերտացիա գրելու մասին: Աբովյանն այդ իր
ուժերից վեր չեր համարում, բայց ժամկետը շատ
կարճ եր: Նա այդ կարճ միջոցում ել հույս ուներ մի
բան անելու, յիթե միայն աղատ լիներ, պաշտոնը
թողներ, ամբողջապես նվիրվեր միայն դրան: Իոկ
յիթե հանկարծ դիսերտացիան չընդունվեր, վոչ միայն
կորկվեր Ղազանի համալսարանի հայոց լեզվի ամբիո-
նից, այլ և այն մի կտոր հացից, վոր հիմա ձեռք եր
բերում, լինելով պաշտոնի մեջ: Ի՞նչ եր մնում անել:

*) «Известия Академии Наук», 1839 г.

սւղարկել յեղած պատրաստ գործերից։ Նույն նամակի մեջ Աբովյանը Ֆրենին գրում ե, «Առաջիկա թըղթատարով պիտի յերկու զիրք ուղարկեմ Ազգային կուսավորության Նախարարությանը։ Ի՞նչ զրգեր եյին դաշնք, մեկը՝ «Ռուս տհական և գործնական քերականություն հայերին լեզվով ըստ Տապալի», մյուս՝ «Նախաշավիղը», «Տարերք արդի հայերէնի» վերնագրի տակ։ Այս վերնագրերը քաղված են Աբովյանի նամակից։

Վարեղից գիտենք, վոր «Տարերքը» նույն «Նախաշավիղն» ե։ Միակ աղբյուրը, վորի վրա հենվելով կարելի յե հաստատել այդ միտքը, Բրոսսեյի զրախոսությունն ե։ Բրոսսեյի ասելով, բացի Տապալի քերականությունից, Աբովյանն ուղարկած ե յեղել «Ընթերցարան հայ պատանիների համար, կազմված լավագույն մասնագետների մեթոդով»։ Այդպիսով, ամենից տուած, Բրոսսեյի վկայությամբ ճշովում ե Ֆրենին գոված նամակում յեղած հիշատակությունը, և, յերկրորդ, մյուս գլուխ վերնագրերը համրնելում ե Ուվարովի նամակում յեղած զրքի անվանը («Զեռնարկ սկզբնական դասատվության յերեխայոց՝ նորագույն մանկավարժների մեթոդայով»)։ Իսկ Ուվարովի նամակում և Բրոսսեյի գրախոսության մեջ հիշված այդ անուններն ընդհանուր շատ բան ունեն «Նախաշավիղի» լոիվ խորարիի հետ («Նախաշաւարիղ ի պէտք կրթութեան նորագարժեց»)։

Հստ Բրոսսեյի հիշատակած վերնագրի, մենք գործ ունինք մրայն ընթերցարանի հետ, մինչեռ «Նախաշավիղը» ընթերցարան լինելուց բացի նաև այբբենարան ե։ Իսկ այդ վերնագրից չե յերեւմ,

վոր դա նաև այլբենարան ե։ Աբովյանի ձեռագրերի մեջ պահվում ե մի ընթերցանության գիրք, ըստ յերեւութին, նույնպիս հայ պատանիների համար կազմված։ Մի գուցե հենց այդ ե ուղարկվել Գիտությունների Ակադեմիա։ Թերեկո՞ս դա յել եղել ե Բրոսսեյի քննության առարկան Սակայն այդպիս չի։

Ամենից առաջ Բրոսսեյի մոտ հարցը միայն վերնագրի հիշատակումով չի սպասվում։ Նա հանգամանորեն գիրքը քննել ե ըստ եյության։ Բրոսսեյի ասածներից պարզ յերեւմ ե, վոր նրա ձեռքին յեղել ե «Նախաշավիղը»։

Բրոսսեն ասում ե, վոր Աբովյանի գիրքը տեսական և գործնական բաժիններ ունի։ Ասել ե, գըրքին կցված ե յեղել առաջարան կամ ներածություն, վոր նրա տեսական մասն եր, վորին հաջորդում եր գրքի գործնականը, այսինքն այբբենարանն իր ընթերցարանով։ Զեռագրերի մեջ պահպանված անտիպ ընթերցարանն այդպիսին չե։ Այդպես ե, ընդհառակը, «Նախաշավիղը»։

Ուրիշ ի՞նչ վկայություն կարող ե հաստատել, վոր իրոք Բրոսսեյի ձեռքին յեղածը «Նախաշավիղն» ե յեղել։

ա) Բրոսսեն, խոսելով գրքին կցված առաջարանի մասին, հիշում ե Աբովյանի առաջարկը՝ յերեխային գրամանաշություն ուսուցանելիս, տառերի արհետական անունները տալուց հրաժարվելու և այն հընչական մեթոդով փոխարինելու անհրաժեշտության մասին։ Այս նույն մաքին մենք հանդիպում ենք

նաև «Նախաշավավի» մեջ, «Նախ քան զգասն վարժապիտն սկսանի խոսիլ ընդ մանկանց» խրատի 11-րդ եջում:

բ) Բրոսսեն կանգ ե առնում զրքի բովանդակության վրա և առում, վոր այնտեղ կան բարոյական խրատներ, աղոթքներ, ոգտակար և զվարճալի պատմություններ և, նույնիսկ, բանաստեղծություններ։ Նյութերի այս թվարկումը չի համընկնում ձեռագիր ընթերցարանի հետ։ Վերջնիս մեջ աղոթքներ չկան, վոչ ել չափած հողվածներ։ Իսկ «Նախաշավավի» ընթերցարանը կազմված ե հենց այն նյութերից, վորոնք մեկ առ մեկ հիշված են Բրոսսենի գրախոսության մեջ։

Մի ուրիշ աղբյուր ել կա. դա գերմաներեն լեզվով գրված բացատրականն ե, վոր Արովյանն ուղարկել եր իր գրքի հետ Այդ բացատրականի վերջին մասն ամբողջապես նվիրված ե զրքի սկզբունքներին։

Ի՞նչ ե պարզում այդ բացատրականը.

ա) Հիշված են այն նյութերը, վորոնցից կազմը ված ե զիրքը։ Այս հիշատակության մեջ նորն այն ե, վոր ձեռնարկի մեջ զրուցյներ կան ֆիսիկայի և բընապատմության հետաքրքիր յերևույթների մասին։ Այդ մասին խոսք չկա Բրոսսենի մոտ, մինչդեռ ռնախաշավի» մեջ Արովյանը քիչ եցեր չի նվիրել այնպիսի նյութերի, ինչպես յերկը կազմությունն ե, յերկրաշարժը, անձրւը, ձյունը և այլն։

բ) Վերջապես, գերմաներեն բացատրականի մեջ Արովյանն իր գիրքն անվանում ե դասագիրք, ուսումնական ձեռնարկ, և վոչ ընթերցանության զիրք։

«Նախաշավի» այստեղ կոչվում ե «Նոր հայերեն լեզվի տարրական գիրք»։ Այս խորագրումը հաստատում ե Ֆրենին գրված նամակում յեղած վերնագիրը («Տարերք արդի հայերենի»):

Այսքանն ել բավական ե համոզվելու համար, վոր իրոք Գիտությունների Ակադեմիային Արովյանն ուղարկել եր հենց «Նախաշավի»։ Վորը, սակայն, այն ժամանակ այլ վերնագիր ե ունեցել։

Ի՞նչ ճակատագիր ունեցավ «Նախաշավի» Գիտությունների Ակադեմիայում։

Բացի Արովյանի աշխատություններից՝ կար և մի ուրիշը, Ավագանի «Եցլայի օչերք արմանական լիտերատուրայ ակնարկը», թե վերջնիս, թե Արովյանի գրվածների գրախոս ե նշանակվում ակադեմիկ Մարի Բրոսսեն։ Բրոսսենի թեկնածությունը, ինչպես պարզվում ե, առաջ եր քաշել Ֆրենը։

Բրոսսեն իր գրախոսությունն սկսում ե այն հարցից, թե ամբոնի թեկնածուներն ինչ աշխատություններ են ներկայացրել և վորքան նրանք համապատասխան են Ակադեմիայի պահանջին։ Նա գըտնում ե, վոր յերկուո՞ն ել մըցության գիսավոր պայմանից շեղվել են, Ավագանը, — առում ե նա, — այսպես թե այնպես տվել ե գրական ինքնուրույն աշխատություն։ Իսկ Արովյանը բոլորովին շեղվել ե գրական-գիտական շարադրության փոխարեն ներկայացրել ե գործնական ձեռնարկներ։ Միաժամանակ, չի թագցնում Բրոսսեն, Արովյանն իր ներկայացրած դասագրքերի մեջ բարձրացնում ե միանգամայն նոր և կարևոր մի հարց, գրաբարից աշխարհաբարին անցնեալու մասին։

Ե՞ւ խնդիրը, վորն անմիջապես կապված է Ղազանի
համալսարանի հայկական ամքիոնի ապագայի հետ:

Այդ բոլորից հետո Բրոսսեն անցնում է Ավա-
գյանի աշխատության գնահատությանը, ապա Սրո-
վագյանի ձևուարկներին, քննելով նախ «Ծուս տեսական
և գործնական քերականությունը»: Նկատի ունենալով,
վոր այդ գիրքն անձանոթ է նույնիսկ մեր գրական
նեղ շրջաններին, հրապարակում ենք նրա ոռւաելին
առաջարանը:

ПРЕДИСЛОВИЕ

К теоретическо-практической грамматике, состав-
ленной на Русском и Армянском языках по руко-
водству Таппе.

Учителем Х. Абовьяном

— · —

ПРЕДИСЛОВИЕ

Цель изучения какого нибудь языка состоит
не в том, что бы приобрести себе тем только врем-
енную пользу в общежитии, а более образовать
ум и чувства наши чтением различных творений на
оном, и подружиться с духом того народа, которого
языку мы учимся.

И какой из Восточных, или из Западных язы-
ков может в этом отношении споспешствовать на-
шей нации более всех, как не Русский, которого
польза и качества заставили и образованных народов
нашего времени заниматься им, тем более Армян,
которые видят всю необходимость изучения его?

и чувствуют пользу, которую они могут извлекать
из него как в отношении Государственной службы,
так и в общежитии.

Армянский народ, веками наслаждаясь отцовским
покровительством человеколюбивого Российского
Правительства, ни в какое время не упускал из виду
случая, оправдывать в себе дары милости, как вер-
ностию в службе, так и стремлением: усовершенст-
вовать себя в этом языке, как это видно во
всех учебных заведениях, учрежденных щедрым
Правительством для образований их; а по при-
родному своему остроумию и отличным способностям
приобретает в короткое время основательное знание
Русского языка. преимущественно же внутри Импе-
рии, где многие из них владеют им как при-
родные Русские; однако не смотря на все эти средства
и благонамеренные старания местного Начальства,
по сие время найдутся между здешними Армянами
не многие, которые знали бы Русский язык с Ар-
мянским так, как бы они могли быть полезными
в Гражданской службе как переводчики. Этот недо-
статок чувствителен в особенности у нас в
Закавказском крае, где одним недостает необхо-
димого знания Армянского языка, другие же при
всем изучении Армянского языка чувствуют себя
довольно слабыми в Русском. И это все зависит
от неупотребления в здешних заведениях срав-
нительного преподавания обоих языков, как это
делается внутри России и в других образованных
государствах для многих языков. При этом сравни-
тельном способе преподавания опытный наставник,

сводя одинаковые правила и общие свойства обоих языков, облегчает вдвое труд ученикам своим и подвигает их скорыми шагами в изучении обоих языков. Этот благодетельный способ остается здесь в неупотреблении как от недостатка учебной книги, так и от затруднений, необходимо сопряженных с этим преподаванием. Чувствуя недостаток учебника, я принимался за составление его, в желании доставить тем пользу, как здешним учащимся, так и многим моим соотечественникам, обитающим в Турции, Персии и Индии, которые охотно бы пожелали познакомиться с этим языком, имея в руках хорошее руководство.

Правда, по временам выходили книги отчасти похожие на подобное руководство, как то грамматика Архидиакона Авраама Вагаршапатского, напечатанная в Астрахане, грамматика отца Минаса Бжишкяна в Венеции, но они не выполнили своих назначений. Первая, будучи только переводом Русской грамматики на армянский язык, содержит в себе только сухие определения правил без практических примеров, а вторая стара и при том Автор, выражая Русские слова Армянскими буквами, перековеркал их Итальянским произношением. В доказательство чего могут служит следующие примеры: наприм. вместо того, что бы передать чистыми Армянскими буквами слова: части речи—*չափի րեզի*, господин Автор передает так: *yasthi rregi* (джасди рреджи); слова: местоимение, причастие, наречие, предлог, полк, Генерал и т. д. заставляет произносить вот как: *Mesthoimenie*,

Phrritshasthie, narretschie, Prretlog, Pholk, General (*մեթոփենիէ, փոխսպէէ, նառեշիէ, փռելող, Փռլը, ջւնեռալ*). И делая грамматику его исполнена подобными ошибками, изуродывающими произношение молодых Армян, в устах которых теряется вся мягкость и благозвучие Русского языка, между тем, как Армянская Азбука пред многими имеет те преимущества, что ею можно выразить даже самые трудные звуки иностранных языков. Кроме того на Русском языке вовсе нет этих букв: *ȝ, þ, ң*, и где нужно поставить буквы *щ(т), կ(к), պ(п), բ(б)*, почтенный Автор во всех местах заменяет буквами: *ւ, ք, փ*, и обратно, как что в его сочинении все Русские слова испорчены *в чистом своем произношении*.

а) Ни мало не имея намерения отнимать заслуги многим отличным трудам членов Армянского Венецианского Мхитаристского Общества, которые всегда имеют в виду образование своих соотечественников, живущих во всех частях света, обще полезными книгами, осмеливаюсь только заметить им, что они при переводах своих во всех Европейских языках, дозволяют себе коверкать непростительным образом все иностранные слова, как видно из словаря Французско-Армянского, составленного Доктором Авгером, и из других подобных сочинений.

Эти и подобные убедительные причины служили мне поводом к составлению этой книги для моих соотечественников. При составлении ее я руководствовался отличным сочинением известного Немецкого писателя

Доктора Таппе, который получил признательность своих соотечественников за основательное, остроумное и легкое расположение правил Русского языка и различных практических задач для перевода с одного языка на другой. Кроме того книга его содержит сокращенную историю и географию Российской Империи, нравоучительные Басни и Анекдоты с показанием ударений, свойственных всякому слову; при этих достоинствах сочинение его дожило до седьмого издания.

Однакож не везде следовал я почтенному Автору. Имел в виду совсем другую публику, я почел необходимым переменить некоторые места, где убавить, что казалось мне ненужным, где прибавить, соображаясь с свойствами нашего языка. Так напр. казалось мне излишним вместить все рассуждения Автора о буквах и правилах Славянского языка. Равным же образом почел я затруднительным передать слово в слово все его философические исследования и определения о частях речи, я постарался по возможности изъяснять их ясно, коротко и свойственно нашему языку. Зная также по опыту, что практические примеры склонений более понятны, в особенности для малолетних, чем Таблицы, то я исключил сих последних и оставил только первые. При конце Российской Истории прибавил еще некоторые замечания, относящиеся к странам и народам Закавказского Края.

В желании обратить внимание Филологов, исследующих происхождение народов от одного поколения по сходству языка, и на отечественный мой

язык, я присовокупил еще особенную Таблицу слов одного значения и звука, находящихся на Русском, Армянском, Немецком и Французском языках.

И как Автор в друзьях своих Пургольде и Тилеме, нашел себе сотрудников, так и я, имел ревностным сотрудником Г. Аркадия Аракатова, учителя Армянского языка при Тифлисской Гимназии.

Բրուսելի յեղակացությունն Արովյանի այդ աշխատության մասին հետեւյալն ե.


Его (т. е. Абовяна) мысль—перевести на армянский язык прекрасную русскую грамматику Таппа без сомнения очень похвальна. В то время как министр (народного просвещения) с такой энергией и рвением осуществляет мысль о развитии изучения русского языка во всех университетах империи, автор своей попыткой положить начало изучению этого языка армянами доказывает, что он понял свое время и истинные нужды своих компатриотов. В русском предисловии он излагает вышедшие до него труды по облегчению изучения русского языка армянами. Он основательно осуждает систему транскрипции русских слов латинскими буквами, усвоенную Минасом, переводчиком на армянский язык русской грамматики, систему построенную на итальянском произношении, притом очень несовершенном. Так как итальянское произношение, конечно, неизвестно ученикам, изучающим русский язык, то систему Минаса никак нельзя похвалить. Автор осуждает также способ передачи отдельных звуков русского

языка армянскими буквами... М. Петерман (Берлин) автор новой армянской грамматики доказывает многочисленными примерами своевременность перехода к более точной транскрипции. Я вполне разделяю этот взгляд и с удовольствием вижу, что и наш армянский автор того же мнения, хотя оно ему не было известно. Я все-таки отметил на его рукописи несколько неисправностей в деталях, которые, я полагаю, должны исчезнуть из его системы, чтобы сделать ее вполне правильной. и логически совершенной...»

«Я тщательно читал этот перевод, сравнение с оригиналом убедило меня в том, что текст переведен совершенно точно, я мог отметить только несколько незначительных пропусков, о которых автор сам упоминает в предисловии, несколько изменений в области материала, а также удачное приложение обучения за последнее время политики народного образования в Закавказье.»

Գրախոսության շարունակությունը և, կարելի յետին, գլուխվոր մասը նպիրված է «Նախաշավղի» քննությանը: Արովյանի բախտը Գիտությունների Ակադեմիայում վճռեց «Նախաշավղիով»: Մեջ ենք բերում Բրոսսեյի կարծիքը «Նախաշավղի» մասին ամբողջությամբ:

«... Второй труд этого же автора, его «Книга для чтения», состоит из двух частей: теоретической и практической,



Ակադեմիկ Մարի Բրոսսե

В немецком вступлении, которое было прочитано г. Френом и получило его прекрасный отзыв, автор излагает историю изменений и упадка древнего армянского языка, он говорит, что последний совершенно вышел из употребления в Армении, где одно только духовенство (и то не без исключений) знает его и пользуется им, хвалит преимущество современного языка, его простоту, настаивает на необходимости обучать армянский народ правилам нового языка и устранить старый язык, утверждает, что игнорирование нового языка и сохранение старого есть причина глубокого невежества, в которое погружен народ и само духовенство: в осуществление этих целей он и составил свою хрестоматию на народном армянском языке.

Если автор этого труда предназначается на должность ординарного профессора Казанского университета, то подобные утверждения его никак не позволяют думать, что он в состоянии выполнить с честью свои обязанности. Здесь и возникает вопрос, возбужденный его трудами, о чем я говорил в начале своего доклада В каких целях была основана в Казанском университете кафедра армянского языка? На какого рода слушателей рассчитываются профессорские лекции и чему они могут научить? Таковы первые вопросы, которые задаешь себе, когда составляешь представление о взглядах автора».

«Казанский университет — не гимназия и не начальная школа для детей — школа первой ступе-

ни, как мы называем ее во Франции — университет есть очаг высших знаний, где ученые сообщают умственно подготовленным людям знания, превышающие детское понимание. Казань — полуевропейский, полуазиатский город — должна стать по мысли правительства цивилизаторским центром для подвластных империи народов Азии. Уже языки арабский, татарский, персидский, китайский, монгольский имеют в нем своих лучших представителей, которые учат азиатов денить их старые литературные сокровища и побуждают учащееся юношество открывать новые. Когда к этим языкам присоединится армянский, то почти все будет сделано для создания полной энциклопедии азиатской культуры, которую хотят обосновать в Казани...

«... Если таково действительно требование, которому призвана удовлетворять армянская кафедра в Казанском университете, то является вопрос, способен ли Автор с особенностями его взглядов удовлетворить эту цель?

На этот вопрос автор отвечает своими работами, в которых утверждает, что книжный язык Армении есть язык мертвый для народов, происходящих от Гайка, что он бесполезен и даже вреден для обучения слушателей неподготовленных и лишенных рвения».

«... Спросите теперь у литераторов, какой из двух армянских языков они предпочитают, ответ ясен, но обратитесь к народной массе, сообразите ее требования и нужды и ответ будет не менее бесспорен.

Без сомнения, университет, который захочет блистать наукой, высокой культурой армянской филологии, должен практиковать высшее образование, образование, которое будет в свою очередь способствовать цивилизации Армении, должен будет дать юношеству преподавателя, хорошо знающего народный язык, способного писать на этом простом языке, на котором говорят несколько миллионов людей... Ведь нельзя забывать, что армянский народ еще не образован, его надо приобщить к культуре, это народ невежественный, среди которого элементарная грамотность большое и редкое явление...

Откуда же придет свет, который рассеет мрак? На старом языке только книги, которых никто не читает, никто не понимает, которые трактуют вопросы религии, из которых народная масса берет одну лишь обрядовую сторону, на новом языке — ни одной книги. Цивилизация может притти в Армению только через посредство народов более культурных по сравнению с ней, посредством чтения книг, написанных для нее на основе лучших книг европейской культуры. Быть может в этом главное назначение этой армянской кафедры, основанной на европейских границах Российской империи — на стыке Азии и Европы.

Вот мысли, подсказанные мне не личным убеждением, так как я не очень высоко ставлю народный армянский язык, но пожеланием, которое высказал автор разбираемого труда, а также долгие и частые беседы с людьми, хорошо на практике знающими Армению, интересующимися судьбой bla-

городной нации, жаждущей прогресса и способной сделать быстрые успехи в этой области (пользуясь словами одного выдающегося лица), лишь бы только ей была оказана помощь и покровительство. И вот появился человек, который взял на себя миссию просветить свой народ, который со всею страстью отдается этой святой задаче и которого не остановили преследования и противодействие. Он понимает, что умственное развитие его народа находится в руках России и составляет грамматику, которая может дать его соотечественникам возможность почерпнуть знания из русских книг. Он не презирает многочисленный класс простого народа, он готовит для него в своей «Хрестоматии для чтения» книгу, вполне ему доступную. Он разрабатывает для него особый метод элементарного образования, он показывает, что хочет и может распространить образование при помощи нового метода... Будет ли осуществлено его желание?

«Нам остается теперь рассмотреть его книгу и его метод.

В кратком предисловии автор излагает свои взгляды на воспитание детей и юношества с горячностью, делающей честь его усердию. Я думаю, однако, что ему следует устраниТЬ те места, где он поносит невежество и злую волю армянского духовенства, этих защитников метода, явную устарелость которого можно сделать очевидной путем простого предложения нового, совершенного метода, не прибегая

и ругательствам и оскорблением. Мне кажется, что ни в коем случае не следует допускать тех энергических выражений, которыми автор клеймит отрицательные стороны церковного просвещения в Армении.

Автор прежде всего требует, чтобы дети усвоили алфавит, не в виде искусственных армянских названий букв, как это имеет место во всех алфавитах мира, он хочет, чтобы согласные буквы назывались по начальным звукам их значений, и думает, что это сократит и облегчит их усвоение.

Я полагаю, что краткость этих новых названий действительно облегчит усвоение алфавита, но, с другой стороны, я считаю, что не надо переувеличивать полезность такого применения...

Когда ребенок научится различать буквы, что, по мнению автора, требует очень мало времени, он переходит к чтению отрывков, имеющихся в «Хрестоматии»: эти отрывки заключают нравственные предписания, молитвы, полезные и занимательные рассказы и даже стихи, в числе которых есть и собственные творения автора.

Если рассматривать эту хрестоматию, как книгу для чтения для детского возраста, то она не без достоинств, хотя и не выдающихся.

За то время, когда я имею честь носить звание академика, мне было представлено для отзывов много армянских книг; некоторые были отвергнуты, иные приняты в качестве учебников для школ. Еще недавно я считал себя вправе давать одобрительные отзывы о

таких грамматиках, которые были составлены исключительно для книжников. Когда я исследовал их, я никак не предполагал, что мне скоро придется переменить свое мнение о них. Зная Армению только по небольшому числу книг, из которых я черпал научные сведения о ней и о Грузии, не будучи силен в армянском народном языке, крайне бедном по средствам его изучения, я рассуждал как теоретик. Если ныне я развиваю мысль о преимуществах нового языка, то это благодаря нашему автору, внушившему мне эту идею, а также благодаря доводам знающих людей, доказавших мне правоту этого взгляда.

Мне думается, что всякое мнение, разделяемое и поддерживаемое многими, должно быть утверждено, развито и распространено, хотя бы только с той целью, чтобы привлечь к нему внимание высших властей, чему я и посвятил значительную часть моего доклада.

Բրուսեն իր գրախոսության մեջ յերկու տեղ հիշում ե, վ ը «Նախաշավդին» կցված ե յեղել մի գերմաներեն բայատրական: Ի՞նչ ե այդ: Աբովյանը ֆրենին գրած մի նամակում, դեռ 1839-ի հոկտեմբերի 9-ին, անդրադառնալով Գիտությունների Ակադեմիային ուղարկած գրքերին, ասում է, վոր ինքը «Ճարերք արդի հայերենի» գրքին, այսինքն՝ «Նախաշավդին» կցելու յե մի գերմաներեն առաջաբան: Բրուսեյի խոսքը հենց այդ առաջարանի մասին եւ Այդ բայատրականի մեջ Աբովյանն արծարծում ե մի քա-

նի կարեոր, սկզբունքային հարցեր, վորոնք գրականության մեջ հայտնի դարձան միայն վերջերս, Բրոսսեյի գրախոսության յերևան գալուց հետո. Իոկ գերմաներեն բացատրականը հրապարակի վրա չկար: Այս պատճառով ել Բրոսսեյի գրախոսությունը մինչև հիմա միակ աղբյուրն եր հանդիսանում, վորի վրա հենվելով աբովյանագետները քաղում եյին գերանապիր առաջարանում Աբովյանի արծարծած մտքերը:

«Նախաշավիղը» հետազոտողը չեր կարող անտարբեր մնալ գեպի մի այդպիսի կարեոր վավերաթուղթ:

Բրոսսեն իր գրախոսության մեջ Տապափի քերականութան մասին խոսելով՝ առում եր, վոր ինքը Աբովյանի ձեռագրերի վրա նշել ե մի քանի անճշշտություններ, վորոնց վերացումով նրա սիստեմը կդառնա լիապես ճիշտ և տրամարանական տեսակետով՝ կատարյալ: Այդ նշումները Բրոսսեն արել ե, անշուշտ, Աբովյանի համար: Ուրեմն ձեռագիրը պետք ե նորից ընկներ Աբովյանի ձեռքը: Վերջապես հայտնի յե, վոր 1841-ի սկզբներին Աբովյանը հետ ե ստացել իր աշխատությունները: Հետեապես, յեթե վորեե դժբախտ պատահար կորցրած, վոչնչացրած չիներ այդ աշխատությունները, ապա նրանք պետք ե գտնվելիս լինելիս Աբովյանի արխիվում, վորը, ի միջի այսոց, այնքան հարուստ ե մինչև այժմ անհայտ, չուսումնափած նյութերով: Շատ ուրիշ, մինչև այժմ չընթերցված նյութերի մեջ, լուս մոռացության մեջ հանդչում եր արխիվի գերմաներեն ֆոնդում «Նախաշավիղ» գերմանագիր առաջարանը, վորը մի շատ կարեոր, հետաքրքրական փաստաթուղթ ե վոչ միայն Աբովյանի կենսագրության, այլև ընդհանրապես հայ

հասարակական մտքի պատմության մեջ: Մեջ ենք բերում նորահայտ փաստաթղթի հայերեն թարգմանությունն ամբողջությամբ:

ԴԻ ՏՈ ԴՈ ԻԹ ՅՈՒՆԵՐ*)
ՆՈՐ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՏԱՐՄԱԿԱՆ ԳՐՔԻ
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լեզուն անշուշտ ամենապահի գործիքն ե, վորի միջոցով մի մարդ իր ներքին հոգեվիճակն ե արտահայտում այլ մարդկանց, առանց վորի վոչ անհատը, վոչ ել մանավանդ ժողովուրդը ի վիճակի չե մտքերն ու դպացմունքները հաղորդելու ուրիշներին, մանավանդ ավանդելու հաջորդ սերունդներին: Լեզվի մեջ, ինչպես մաքուր հայելու մեջ, ցոլանում ե մի ազգի առանձնահատկությունը, նրա կուլտուրան, մինչև անգամ նրա քաղաքական վիճակը: Ինչպես առանձին անհատի մոտ տարիքի աճման գեպօւմ, այնպես ել յուրաքանչյուր ժողովրդի մոտ նրա հոգեվոր զարգացման աճման կամ նվազման հետ միասին լեզուն ել բոլորովին այլ կերպարանք ե ստանում: Ո՞վ կարող է մխտել, վոր մեր ամբողջ հոգեկան զարգացումը, ինչպես և մեր լեզուն գլխավորապես կախված են այն պայմաններից, վորոնք մեզ վրա քաղաքական ազգեցություն են ունեցել, կրթական հիմնարկների և գիտական հետազոտության բացակայությունը, շիումն այլ աղգերի հետ, ստար լեզուների իմացությունից քաղած արտաքին ոգուտը— այս բո-

*) Գերմաներենից հայերեն ե թարգմանել Հակոբ Հարությունյանը:

լորն առանց այն ել արդեն բավականաչափ ուժեղ հիմք են, վորոնց պատճառով մենք կարող ենք մեր լեզուն հակամայիցս անտեսել: Յեվ յեթե մի ժողովուրդ քաղաքակրթված պետությունների մեջ յենթակա յե այս ազգեցության, ինչպես ցույց են տալիս հին և նոր ժողովուրդների որինակները, — շոթլանդացիները՝ անգլիացիների տիրապետության տակ, բոհեմներն ու հոգաները՝ գերմանացիների, սպանացիների, ֆրանսացիներն ու անգլիացիները՝ հոգանացիների և այլն, — ապա ալդպես չե բոնապետական յերկրներում, վորտեղ աշխատում են ամեն ոտար և ազգային բան բոնությամբ վոչչացնել: Յեվ յերբ մի ժողովուրդ դժբախտություն ե ունենում իր յերկիրն ու ինքնուրույնությունը կորցնելու և իրեն իր սեփական հայրենիքում վորպես ստրուկ զգալու, — իսկ այս ավելին ե ասում, քան այդ ամենը, — այլես կարո՞ղ ե նա ի վիճակի լինել մտահոգվելու նրանով, վոր զբաղվի գրականությամբ ու գիտությամբ, չե՞ վոր դրա համար անհրաժեշտ ե, վորպես հիմնական պայման արտաքին խաղաղություն, բարեկեցություն և անդույնամք կառավարության կողմից:

Հայաստանի ճակատագիրը հայտնի յե ամեն մի կրթված մարդու, Մոլի բոնապետական պետությունների ծանր լծի ճնշման տակ՝ Հայաստանի հայրենազուրկ զավակները վաղուց են հեռացել իրենց յերկրից և ապաստանել համարյա բոլոր աշխարհամասերում: Այս հանգամանքն ե յեղել պատճառը, և վոչ թե առևտրական վոգին, ինչպես վոչ ժամանակակիցները, — վոր հայերը վտարվել են իրենց

յերկրից: Իսկ յերկրում մնացած իրենց յեղբայրակիցները միայն գույքի և կյանքի գնով են կարողացել իրենց սուրբ հայրերի անունն ու իրենց կրոնը պատմության բեմի վրա պահպանել: Իսկ նրանց ազգային ինքնուրույնությունն ու լեզուն հազարամյակների առաջ կորել են ամեն ինչ խորտակող ուժեղ հեղաշրջումների հորձանքի մեջ, վորի նմանը հազիվ թե մի այլ աշխարհամասում յեղել ե:

Վորքան ել հին հայերեն լեզուն իր արտակարգ հարթության, իր կատարելության և իր գրական արժեքի կողմից բարձր լինի, այնուամենայնիվ այդ լեզուն ե միակ արգելակող պատճառը, վոր խեղճ ժողովուրդը մինչև հիմա զուրկ ե մնացել զարգացման միջոցներից:

Սակավաթիվ ընտանիքներ, վոր բարեբաստիկ կերպով հայրենիքից հեռացել են, փոխարինում են իրենց կենցաղն ու լեզուն այն ժողովրդի կենցաղով ու լեզվով, վորոնց մոտ ապրում են: Նրանք բոլորովին մոռացել են իրենց մայրենի լեզուն, ինչպես այդ տեսնում ենք լեհաստանում և թյուրքիայում, անգամ այստեղ՝ Վրաստանում: Ժողովրդի մեծագույն մասը, վոր մնացել ե Հայաստանում, զարեր շարունակ թյուրքական ժողովուրդների ազդեցության տակ լինելու և արտաքին ճնշման տակ կուացած լիւր, ուրեմն և ամենատարրական իմացություններից զրկված լինելու հետևանքով՝ կենցաղի և տարրագի հետ միասին ընդունել ե նաև նրանց լեզվի կառուցվածքը: Այդպիսով, առաջ ե յեկել մի բոլորովին ուրիշ բարբառ, վոր ինչպես իր կազմով, այնպես ել իր ձևով բոլորովին տարբեր ե հնից և ամեն բանում նման ե

թաթարականին։ Սովորական խոսակցության ժամանակ ժողովրդի բերանից լսում ես վոչ միայն թուրքերին բառեր, այլ ամբողջ նախադասություններ ու դարձվածքներ։ Մինչգեռ գրքի լեզուն մնացել ե վորպես սեփականություն հոգեորականության, վորը—ինչպես նուազակիցները մյուս ազգերի մոտ—ոկան այդ լեզուն եզրիստորեն դարձնել յեզիրտական գաղտնիք, վորպեսզի ժողովրդի աչքում ավելի դիրք ու ակնածություն ձեռք բերի։

Զափից շատ բարձր կարծիք ունենալով իրենց դասի առավելությունների մասին՝ հոգեորականները գրել և մշակել են այնպիսի բաներ, վոր վոչ մի կապ չունի ժողովրդի և ժամանակի վորու հետ։ Նրանց ամբողջ հոգեոր գործունեյության ուղին ու ծուծը կազմում են աստվածաբանական մտքերը։ Նույնիսկ պատմության գրքերում կամ այլ բովանդակության յերկերում նրանք ամեն ինչ փորձում են վերածել աստվածաբանության։ Յեկ յեթե տեղադրություն չեն ունենում յերիտասարդներին դաստիարակելու, ապա նրանք ամեն կերպ աշխատում են նրանց ճաշակը գրավել միայն հոգուտ իրենց շահերի։

Սակայն այս ել յերկար չտեսյու Յեկ այժմ, նույնիսկ, խոշոր քաղաքներում հաճախ ես հանդիպում հոգեորականների, վորոնք հին հայերենից վոչ մի գաղափար չունեն։ Յեկեղեցական արարողությունը կատարվում ե գրաբար լեզվով, աստվածաշունչն ու բոլոր յեկեղեցական գրքերը կարդացվում են գրաբար։ Ապակայն հարյուրից հազիք մեկը կարող ե այդ լեզուն հասկանալ, ուստի և բնական ե, վոր ժողովուրին ոկան գալու այն լեզուն, վորը նաև հասկանում։ Զարգա-

ցած յեկեղեցայիները զարմանում են, վոր հայ ժողովուրդը, վորի ճակատագիրն ու բնակավայրը այդքան նպաստավոր ե պոեզիայի համար, այնուամենայնիվ այժմ վոչ մի բանաստեղծ չի կարող ցույց տալ։ Սակայն ամբողջ գաղտնիքը հետևյալումն ե— հոգեորականությունը ծաղրել ե այն ամենը, ինչ բանաստեղծական իմաստ ու զգացմունք ունի, վորպես իր դասի համար անվայել և գուեհիկ բան։ Ժողովրդի լեզուն մնացել ե անմշակ։ Թուրքերները նույնիսկ կանայք և յերեխաններն են հասկանում։ Ուստի շատ բնական ե, վոր ժողովրդի մեջ ականավոր և ի բնե բանաստեղծական ձիրք ունեցող մարդիկ թաթարերեն բանաստեղծեյին և արտասանեյին։ Մի Քեշիշողի (քահանայի տղա), մի Ալլահվերդի (Աստվածատուր) հանճարներ են յեղել վոր մի ժողովրդի գրական փառք ու պատիվ կրերեյին։ Թաթարները հիանում են գրանց բանաստեղծությունների և յերգերի գեղեցկությամբ։ Մինչգեռ դրանք հայ են յեղել։ Առանձնապես առաջինը, վոր մի քանի տարի առաջ մեռավ, կույր երև, շնորհիվ իր արտակարգ բանաստեղծական ճաշակի, թուրքական արքունիքում մեծ հարգանք եր վայելում *):

Զի կարելի ժխտել, վոր բարեկեցիկ ծնողներից վոմանց հաջողվում ե իրենց յերեխաններին սովորեց-

*) Գրականության համար չափազանց արժեքավոր գանձ կլիներ, յեթե մեկը ժամանակ և միջոցներ ունենալ հասարակ ժողովրդի բազմազն յերգերը, պատմությունները, անեկոտներն ու առակները հավաքելու և Յեկեղեցականությանը ծանոթացնելու, Սակայն այդ գործը կարող ե միայն նա կատարել, ով արտաքին հոգսերից բոլորվին ազատ եւ

նել գրաբարի գաղտնիքները. տակայն դրա համար անհրաժեշտ ե 10—15 տարի, մինչև վոր հասրավոր լինի վորոշ անկատար գիտելիքներ ձեռք բերել իսկ գրաբարը գործ ե ածվում միմիայն գրքերում: Նույնիսկ հոգեորականները քարող տալիս խոսում են նոր հայերեն:

Դրան ավելանում ե նաև մի հանգամանք. — մեր դպրոցներում ուսուցիչները սիստեմատիկ կրթություն չունեն, ուստի և ուսուցման մեթոդ ել չունեն. աշակերտները հետ են մնում, և տարիներ են անցնում, մինչև վոր նրանք կարողանում են մի բան նորովել կամ խոնարհել, սակայն չեն հասկանում, մանավանդ վոր շատ ուրիշ առարկաներ ել կան, վոր նրանց արտաքին գոյության համար շատ ավելի կարեռ են, քան այդ լեզուն: Հենց այդ հանգամանքն ե պատճառը վոր նույնիսկ շատ բարեկեցիկ ընտանիքներ իրենց յերեխաներին չեն տալիս գրաբար սովորելու, այլ իրենց ժամանակն ու ջանքերը նվիրում են այլ՝ յելլոպական լեզուներ սովորելուն, վոր ավելի ոգտակար ե և գործնական: Ցեղ խեղճ յերիտասարդուներն ինչպես կարող են հաճույք ստանալ, յերբ նրանց ձեռքը տալիս են այնպիսի գրքեր, ինչպես սաղմոսը, և այլն, վորոնք թե լեզով և թե իմաստով անհամապատասխան են այդ յերիտասարդների ըմբռողությանն ու հասակին:

Նոր հայերենը գրաբարի հանդեպ վոչ միայն այն առավելությունն ունի, վոր նա կենդանի ապրում է ժողովրդի բերնում, այլ և այն, վոր նրա քերականությունը վերին առտիճանի հեշտ ե: Նա ունի, չընչին բացառությամբ, միայն մի խոնարհում և մի հոլովում, մինչդեռ գրաբարը բաղմաթիվ հոլովական

ու խոնարհման ձևեր ունի: Ժողովուրդը թաթարական շատ խոսքեր ու դարձվածքներ ե ընդունել և այժմ գործ ե ածում: Կարելի յե լեզուն մաքրել դրանցից և լեզվին այնպիսի հաստատում ձև տալ, վոր գրաբարից շատ չշեղվի, սակայն այնպես, վոր հասրակ մարդու համար իսկ հասկանալի մնա:

Հին և նոր լեզուների գլխավոր տարբերությունը թեքման և շարահյուսության մեջ ե: Գրաբարում, ինչպես և բոլոր նոր յելլոպական լեզուներում, վորոշիչները, հատկացրացիչները, բացահայտիչները գորվում են վորոշալներից, հատկացյալներից և բացահայտյալներից հետո, իսկ նախդիրները՝ առաջ, մինչդեռ նոր հայերենում — թաթարերենի նման — հակառակն եւ Այսպես, որինակ, հին գրաբարում կառեյին. —

Առաջի տան իմոյ կայ ծառ մի: Առ պարտիզի գրացվոյն քոյ հոսի աղբիւր մի: Ես սիրեմ զառաքիւնութիւն քոյ: Համեստություն է զարդն երիտասարդութեան: Վոմանք յաշակերտաց ձերոց են ջանասեր:

Նոր լեզվով ասում են. —
Իմ տան առաջ մի ծառ կար: Քո գրացու պարտեզի մոտ մի աղբյուր ե հոսում: Քո առաքինությունը սիրում եմ յես: Յերիտասարդության զարդը համեստությունն եւ Զեր աշակերտներից վոմանք ջանասեր են:

Այսպես ե նաև թաթարերենում:

Նախ քան Յելլոպա տեսած լինեց, դեռ յերիտասարդ ժամանակ, իմ չերմ ցանկությունն ե յեղել նվիրվելու հայրենի յերիտասարդության դաստիարակության գործին: Ամենաբարի նախախնամությունն

իմ նպատակն այնպիսի դարմանալի ձևով ի կատար ածեց, և մարդասեր կառավարության վողորմածության շնորհիվ իմ կրթության համար այնքան շատ—շատ չվատակած բարիք վայելեցի: Ուրիշ ինչպես պետք է յես իմ յերախտավարությունն շնորհակալությունն իշխանակորների և հայրենիքիս հանդեպ արտահայտեցի, յեթե յես այս կարեւոր հանգամանքը լոռությամբ դանց առնեցի: Վոչ թե նորմուծության մոլությունը, այլ իմ հայրենակիցների ընդհանուր բախտավորությունն եւ շահազրդուել ինձ դիմելու այս քայլին: Դեռ յերիտասարդությունից եմ յես գնացել այս փշալից ճանապարհներով, և այժմ իմ կոչումը շատ պարզ ապացույցներ և տալիս գրա համար: Վորպես զլուխ մի դպրոցական հիմնարկի, վորտեղ տարեկան 200-ից ավելի յերեխաներ են վստահել գլխավորապես իմ զեկավարությանը, ամեն որ այն տիսուր դիտողությունն եմ անում, թե այս ծանր դրությունից միայն մի կերպ կարելի յէ գուրս գալ. — Առ նայերեն մՏցնելով այժման դպրոցական նիմնարկները:

Այս դժվարին կացությունը փոփոխել կարենաւու համար անհրաժեշտ համարեցի փորձել նոր հայերենի մի տարրական գիրք կազմելու:

Այսահեղ իմ նպատակն ե՝ ուսուցիչներին, ինչպես և սովորողներին, տալ ուղեցույց առաջին տարրական պարապմունքների համար: Հաճախ եմ հանդիպել տերտերական կամ այլ դպրոցի աշակերտների, վորոնք տարիներ շարունակ կարդալ են սովորել, բայց յերբ յես նրանց մի գիրք եմ տվել կարդալու, այն գարմանալի պատասխանների, թե

սաղմոս կամ այլ գիրք են կարգացել, և վոչ թե այդ իսկ գրել վոչ մի տառ չեյին կարող: Աղքատով, յես զլիսավոր ուշադրությունը դարձըրի այն բանի վրա, վոր հենց զրքի սկզբում, Նիմայերի և Ստեֆանիի սկզբունքներով ցուցում տամ կարգալուզգրելու մասին և հնչական մեջողը ցույց տամ, վոր նախ յես ինքս մի քանի մասնավոր աշակերտների վրա փորձել եյի և լավագույն աբոյունքի եյի հասել, այնպես վոր աշակերտները տառաձեկերը ճանաչելուց հետո իսկունքն կարողանում եյին ամբողջ բառեր ու խոսքեր կազմել և մի քանի որում սկսել հայերեն ու ուսուերեն կարդալ:

Յերեխաների մտածելու և խոսելու ունակությունը զյուրին յեղանակով զարգացնել կարողանաւու նպատակով (վորովհետեւ մեզանում, նույնիսկ բարձր դասերի մասում, մինչև հիմա ել յերիտասարդության մեծ համեստությունն ե համարվում, յերբ յերեխաները համը շարժումներով են արտահայտվում և վոչ թե խոսքերով): յես աշխատում եյի ուսուցիչներին այնպիսի ցուցումներ տալ, վոր կան Նիմայերի, Կամպեյի և Կրաուլեյի մտավարժությունների մեջ:

Գրքի մնացած մասը պարունակում ե ընթերցանության նյութեր, ինչպես՝ պարզ պատմվածքներ, վոտանափորներ, հետաքրքրական յերեսութներ գիշեկայից և բնապատմությունից, բարոյակրթական պատմություններ — մասմաս յելքութական դասազերքերից, մասամբ իմ կողմից կազմված: Վորպեսզի մինչ այժմ իշխող դասավանդման սովորությանը

շատ դեմ չգնամ, գրքի վերջում դրել եմ գրաբար
հատվածներ:

Վորքան ինձ հայտնի յե, վոչ մի հայերեն գիրք
չկա իմիս նման՝ թե լեզվի և թե բովանդակության
կողմից. այդ յես պարտական եմ գերմաներեն լեզվի
իմ իմացությանը,

Այժմ յես նյութեր եմ հավաքել իմ աշխարհա-
բարի քերականության հրատարակության համար,
վորով հին լեզուն ել կարելի լինի սովորել ավելի
դյուրին և ըմբռնելի յեղանակով: Այս ել եմ ինքս
փորձել փոքր յերեխաների հետ, մյուս ուսուցիչների
միջոցով կիրառել եմ տվել դրա հիմունքները և ինձ
համար շատ շոյող լուրեր եմ ստացել բոլորից, թե
փոքրահասակ մանուկներն անգամ մեծ ուրախու-
թյամբ ու յեռանդով են կանոնները յուրացնում և
որի ըստ այնքան են առաջդիմություն ցույց տալիս,
վոր նրանք առաջ տարիներում չեյին կարող անել:
Ենք ի՞նչպես կարող եր անհայտության մատնվել մի
գործ, վոր վարդում և այնպիսի մարդկանց սկզբունք-
ներով ու հայացքներով, ինչպիսիք են Նիմայերը,
Կրառուզեն և Կամպեն, վորոնք մանկավարժական աշ-
խարհի վառ փայլող առտղերն եյին:

Իմ ձգտման նպատակը, ինչպես և հայ ժողովրդի
ձակատագիրը կախված եմ միայն բարեխնամ կառա-
վարության վճռից: Յեթե ինձ բախտ վիճակի իմ
այս առաջին փորձը կենսագործել, ապա յես իմ բո-
լոր ուժերը կողոծադրեմ ինչպէս վերոհիշյալ քերա-
կանությունը, այնպես և այլ ոգտակար գրքեր կազմելու
և թերես դրանով Կովկասի ուրիշ ժողովությների հա-
մար ել ոգտակար լինելու: Մեր գոլոցի թաթար ուսու-

ցիչ Միրզա Ֆաթուլի Ախունդավլը յուր հայրենակից-
ների համար արդեն ոկսել և այս մեթոդով մի դա-
ռագիրք կազմել:

Հույները, նման անհրաժեշտության հետևան-
քով, թողել են իրենց գեղեցիկ հին լեզուն: Խտալա-
ցիք այդպիսի ուժ ունեցող լատիներենը փոխարինե-
ցին խտալերենով: Այդքան շատ տարածված և դարւը
շարունակ վորպես կրթական լեզու գործածված «լա-
վոներենը հարկադրված եր տեղի տալ ժամանակի
վոգուն և պահանջին:

Միթե միայն հայերը պետք ե մյուս ազգերից
հետ մնան և թողնվեն հոգեկան խավարի այդպիսի
ստրկական կապանքների մեջ: Սակայն ոս մի առան-
ձին անձի գործ չե, այլ բարեհաճ, ընդհանուր բարո-
րության մասին այնպես հայրաբար հոգացող իշխա-
նության գործն ե: Վորքան ել նախապաշարմունք-
ներն ու անհավատությունները առաջին փորձին
վորոշ չափով դեմ գնան, այնուամենայնիվ ճշմարտու-
թյունը և այդպիսի բարձր նպատակների ճշտումը
կհաղթանակեն յերջանիկ գալիքի համար:

Քերմաներեն բացատրականի դեմոկրատիզմն ե,
վոր Բրոսսեյին յերկընտրանքի մեջ եր գցել: Արովյա-
նի աշխատությունները, նրա յեռանդը լուսավորելու
իր ժողովուրդը խորը հարգանք եյին ներշնչել անվա-
նի գիտնականին դեպի հայ ժողովրդի հանդուզն
առաքյալը: Բրոսսեյն ինքն ել չի թագցնում այդ:
Բայց Բրոսսեյի չափավոր հայացքները, քարացած
պահպանողական մտայնությունը, պաշտոնական գա-
ղափարաբանությունը, հարմարվելու զգուշությունն
ու տակտը չեյին կարող հաշտվել Արովյանի հանդուզն

դեմոկրատիզմի հետ։ Գտնելով աննպատականարձար
նոր բաց,ող ամբիոնի պրոֆեսորությունն Արովյա-
նին հանձնելը՝ Բրոսսեն իր գրավոր յեղրակացության
մեջ ներկայացված աշխատությունները տպագրելու
անհրաժեշտության հարցն և պատրաստում։

«Второй соискатель Абовянин из Тифлиса показал себя преданным делу преподавания, проникнутым святостью своих обязанностей, человеком вполне способным их выполнить. Он сопровождал г. Паррота - сына в его путешествии на Арарат и показал столько склонности к занятию наукой, что ученый профессор увез его с собою в Дерпт. Там в несколько лет он усвоил языки — русский, французский, немецкий. На последнем он хорошо пишет, как уверяет г. Френ. Окончив курс с отличием, он вернулся на родину и посвятил себя народному образованию. Новизна, или быть может превосходство его взглядов встретил более чем холодный прием со стороны части его соотечественников, особенно духовенства.

В настоящее время он служит инспектором народных училищ в Тифлисе. Все мои коллеги, которые его знают, питают к нему самое искреннее уважение. Было бы желательно, чтобы он получил возможность применить свои познания в области литературы. Что касается его произведений, то я думаю, что «Метода» Таппа должна быть издана на армянском народном языке, на котором говорят в русской Армении. Абовянин мог бы впоследствии составить хрестоматию для чтения, исподъязуя в ка-

честве основы армянские материалы и руководствуясь планом такой книги, который я предложил выше. Затем он мог бы последовательно перевести на народный язык главные сочинения, имеющиеся на книжном языке, перевод которых будет признан необходимым».)

3. «Նաևաւազավիդը» Թիֆլիսի մանկավարժների գա-
ւարանի առաջ: Բրոսսեն իր յեղրակացությունը հանձ-
նեց 1840-ին մայիսի 13-ին: Գրախոսականը յերկար
ժամանակ մնաց Ուվարովի մոտ: Վերջինս մի նա-
մակով Բրոսսենի յեղրակացությունը Մուսին-Պուշ-
կինին ուղարկեց՝ հարցի լուծումը թողնելով նրան: Մուսին-Պուշկինն Արովյանի մեջ չտեսնելով այն
գիտնականին, վոր պիտի պատվով վարի նոր միայն
կազմակերպված ամբիոնը, հարցը բացասարար վճռեց:
1841-ի մարտի 8-ին նա ձեռագիր աշխատություն-
ներն ուղարկեց Կովկասի կուսակալին, Արովյանին
վերադարձնելու համար: Կուսակալի անունով Արո-
վյանի ձեռագրին նա կցում և հետեւյալ նամակը:

«Թիֆլիսի գավառական ուսումնարանի ուսուցիչ
և պաշտոնակատարն վերատեսչի Արովյանով (Արո-
վյան) ներկայացել եր ի թիվս այն թեկնածուների,
վորոնք կցանկանային ստանալ Ղազանի համալսա-
րանում հայոց լեզվի նորաբացվելիք կաթեդրը:
Առ այս ներկայացրել եր յերեք շարադրու-
թյուն՝ մինը ոռուերեն, մյուսը գերմանի-

*) Բրոսսեն իր կարծիքը ներկայացրել և Փրանսերեն լեզ-
վով:

թեն և յերբորդը հայերսն լեզուներով *): Բայց վորոված է տեսև դիտությանց ակադեմիայի կոնֆերենցիան (խորհուրդ), վորագես հաղորդում ե ինձ աղջային լուսավորության դեպարտամենտը, այդ շարադրությունները բավականացուցիչ չեր համարած, վառնորոպատիվ ունիմ ուղարկել Ձեզ հիշալ գրվածները, խօնարհաբար խնդրելով՝ հրամայել հանձնել այն ալ. Արովյանին » **):

1841-ի փետրվարի վերջերին կամ մարտի ըստ կը զբաներին Արովյանը «Նախաշավիղը» ներկայացնում է կուսակալ Գոլովինին և խնդրում ե ընդունել և տըպագրել տալ այն իրեկ ձեռնարկ արքունի ուսումնարաններում սովորող հայ յերեխաների համար։ Գոլովինն Արովյանի ձեռագիրը մարտի 6-ին ուղարկում է Անդրկովկասի դպրոցների վերատեսուչ կնոպիչին։ Ահա այդ շրջանումն ել Գոլովինը ստանում ե Ուվարովի նամակը Արովյանի մասին։ Մեջ ենք բերում նամակի հայերեն թարգմանությունը։

«Կոմս Բինկենդորֆը 1839 թվին հաղորդեց ինձ, վոր Թիֆլիսի գավառական ուսումնարանի ուսուցիչ և վերատեսչի պաշտոնակատար Արովյանովը (Արովյան) թարգմանել և մշակել յերիտասարդաց համար

*) Մի փաստական անձառություն։ Արովյանը միայն յերկու աշխատանք ե ուղարկած յեղել, մեկը «Նախաշավիղը», մյուսը՝ Տապակի քերականությունը՝ Նյութերին միանդամայն անծանոթ ինելով։ Մուսին Պուշկինը «Նախաշավիղին» կցված գերմաներեն բացատրականը առանձին աշխատություն ե համարել։ Այդ նույն սխալը կը կնվի ե նաև Արովյանի մասին վերջին ժամանակներս լույս տեսած մի գրքույկի մեջ։


**) «Արձագանք», 1896, № 102։

քանի մի սպավես շարադրություններ, բայց չեկարուցացել տպել միջոցներ չունենալու պատճառով։ Վասնուրու հրամանագրվեցավ Անդրկովկայան ուսումնարանաց վարչությանը. վոր Արովյանովից տեղեկություններ առնվեն, թե նրա պատրաստած գրքերի մասին և թե նույն իր գրքերը կանխապես քննելու համար ուղարկվեն Պետերբուրգ, հարակցելով ընդնմին, վոր յեթե հիշյալ աշխատությունները իրավ ոգտավետ համարվեն ուսանող յերիտասարդության համար, այն ժամանակ հեղինակը ինչ տեսակ ոժանդակություն կկամքնար ստանալ յուր գրքերը տպագրելու համար։ Առ այս հիշյալ վարչությունն ուղարկել եր Արովյանովի շինած՝ 1) ձեռնարկ սկզբնական դառատվության յերեխայոց՝ նորագույն մանկավարժների մեթոդայով, և 2) տեսական և գործնական ուսուցացած ուղարկությունը՝ միայն ե, վոր հիշյալ գրքերը տպագրվեն արքունական հաշվով։ Բացի այդ, Արովյանովը բացատրել եր, վոր նրա մնացած յերկու գրքերը՝ այն ե՝ 1) նորագույն հայոց բարբառով հորինած յերկու լեզուն միասին ուսուցանելու համար գործնական քերականությունը և 2) համառոտառություն բոլոր առարկաների և գիտությանց՝ այն ժամանակը նա չե կարողացել ներկայացնել արտագրողներ և ժամանակ չունենալու պատճառով, բայց թե նյութերը արդեն պատրաստած ունի։ Այդպես ահա Արովյանովի ուղարկած գրքերը յետ առաջարկեցի կայսերական գիտությանց ակադեմիային ի քննություն և եքստրաորդինար ակադեմիկ

Բրոսան ավեց իր գեկուցումն: Վերոհիշյալ քննվան գրքերի արքունական ծախսով տպելու խնդիրը վերջնականապես վճռվելուց առաջ, քանի վոր Աբովյանովի աշխատություններից միակ քերականությունն ե, վոր իրու ձեռնարկ՝ Անդրկովկասյան այդ մասին պահանջ ունեցող ուսումնարանաց համար կարող եր պիտանի լինել, յետ կցանկայի նախ՝ վոր Աբովյանովը կատարելագործեր յուր այդ աշխատությունը համաձան ակադեմիկ Բրոսոնի արած ծանոթությանց, և յերկրորդ իմանուլ ձեր կարծիքը այդ մասին և տեղեկանալ թե վորքան ծախսի կարու և տպագրությունը ու ինչ ազբյուրներից պիտի հոգացվի, վորովհետև նախարարությունը ներկայումս վհչինչ դրամական միջոց չունի առ այն, Ընդումին հարակցում եմ, վոր Աբովյանովը յուր գրքերը կստանա Ղազանի ուսումնական շրջանի հոգաբարձուից, վորից ինդրում եր նա հայոց լեզվի կաթեդրը Ղազանի համալսարանում *).

Կնոպֆը Աբովյանի գրքի քննությունը հանձնեց Թիֆլիսի գիմնազիայի հայոց լեզվի ուսուցիչ Արարատյանին, Կնոպֆը վախճանվում ե: Նրան փոխարինում ե իվան վասիլյելիչ Ռոսկովչենկոն: Վերջինս Արարատյանի գրավոր յեղըակացությունը հանձնում ե գիմնազիոնի խորհրդին, վորի անդամներից եր այն ժամանակ հայտնի հայագետ, գիմնազիայի ավագ ուսուցիչ Արզանյանը:

*) «Արձագանք», 1896, № 102: Ինչպես Մուսին-Պուշկինի, այնպես ել Ուվարովի նամակները բերված են Ա. Յերիցյանի թարգմանությամբ:



Խ. ԱԲՈՎՅԱՆ

Գործ նկարիչ՝ Յերկանյանի

Գիմնազիայի խորհուրդը, վորի գաղափառական մակարակը Արարատյանի պահպանողական մտայնությունից բարձր չեր, սարդ ե, վոր այդպիսի մի հանգուգն հղացման լույս աշխարհ գալուն արգելք եր գառնալու:

Թերևս մի վորոշ գեր այդ հարցում խաղացել ե նաև Ռևարովի նամակը, վոր, անշուշտ, մեծ կշիռ և աղղեցություն ուներ գեթ Գոլովինի համար նման հարցեր և կողմնորոշվելիս: Իսկ Ռևարովը տպագըրության համար, ինչպես արդեն զիտենք, պիտանի յեր համարում միայն Տապալի քերականությունը:

1842-ի ապրիլի 6-ին Ռուսկովչենկոն Գոլովինին ներկայացրեց մանկագարական խորհրդի հետեւյալ զեկուցագիրը. «Նախ» Արովյանի գիրքը բովանդակում ե յուր մեջ 1) Կարճորեն հրահանգ հայոց լեզվի սկզբնական դասաւության, 2) Փոքրիկ հեքիաթներ և քաղվածքներ բնական պատմությունից, 3) Վոտանավորով աղոթքներ և քանի մի վոտանավորներ յերեխայոցը զբաղեցնելու ռամկական յերդերով և լալան ճառերով, 4) Վոլր Աղա-Մահմեդ խանի ճեռքով Թիֆլիսն ավերելու մասին, ճառեր Թիֆլիսի հայոց նոր գերեզմանատան (Խոջիվանքի նորոգության) և Եջմիածնի վանքի մասին, վորոնց մեջ, ի թիվու այլոց, համոզում ե հայոց կրթել յուրյանց վորդոց և 5) գանազան քարոյական առակներ և յերգեր: Յերկրորդ՝ Արովյանը հորինել ե այդ գիրքը հատկապես յուր տանն ունեցած աշակերտների համար և այն ել Յերեանի ռամկական բարբառով, վոր խառն ե մյուս դրացի լեզուների հետ և զուրկ ե գրոց լեզվի բոլոր արժանավորություններից և կանոններից. նրա

կարճորեն հրահանգները գրված են չոր ու ցամաք, անկապ. ռամկական յորգերը և գվարճախոսությունները տգեղ սցնում են արտգրությունը. Թիֆլիսի ավերժան վողբը և գերեզմանատան մասին ճառը բուլորովին անոգուտ են ընթերցանության համար. ամբողջ գրքի մեջ թույլ են տրված բացի ոտար լեզուներից առնված անտեղի ռամկական բառերը, նաև բաղմաթիվ անվայելու չասացվածքներ: Այս պատճառով մանկալարժական խորհուց դն, ի նկատի ունենալով Արովյանի ճեռագով արժանավորության և ոգովի մասին Արարատյանցի արած նկատողությունները, յեզրակացրեց, վոր այդ գիրքը Անդրկովկասյան արքունական ռւումնարաններում գործածելու համար պիտանի չե, նախ այն պատճառով, վոր ռամկական լեզուն, վորով նա գրված եր, մինչեւ հիմա ել քերականական վոչինչ վորոշ կանոններ չունի. յերկրորդ՝ վոր գրվածքը տհառ մտածողությանց պտուղ ե և յերրարդ՝ վոր նրա մեջ բազմաթիվ ռխալներ կան մաքրության և ճշտության մասին թե լեզվի և թե ճաշակի: Իսկ Թիֆլիսի գիմնազիայի ուսուցիչ կոլեժովի առեսոր Արգանովը (Արգանյանց) կարծում եր, վոր յեթե Արովյանը չի դժվարանալ ռւղղել այդ գրքի մեջ նկատված թերությունները, այն ժամանակ դակարություն ամենալավ ճեռնարկ հայոց ընթերցանության համար և ոգտավետ կերպով կարող ե գործածվել արքունի գալարական ռւումնարանների առաջին և յերկրորդ դասատանց մեջ:

Հաղորդելով այս մասին ճերդ բարձր գերազանցության, պատիվ ունիմ զեկուցանել. վոր Արովյանի այդ գիրքը հորինելը ցույց ե տալիս նրա գովա-

նի ուսումնասիրությունը և որժանի յե խըախուսաչ նաց իրեն առաջին փորձ վասն զի այլպիսի նորամուծությունքը ամեն անդամ չեն հաջողվում իրանց մայրենի լեզվի ն ւյնիսկ ամենատաղանգավոր հեղափոխուղիներին։ Այսուամենայնիվ յեթե այդ գիրքը գրաքննիչից հավանություն դանե, Արովանը կարող է տպագրել բանասերների համար։ Բայց փորոշիտե նրա այդ աշխատությունը հորինված ե վոչ մաքուր հայերեն լեզվով, այլ Յերեանի բարբառով, ոի բազմաթիվ ոտարազգի բառերով, և չունի վոչ վորոշ ձեզ կեր, վոչ հաստատուն քերականական կանոններ ու միանգամայն գործէ և վոչ միայն դրական արժանաւ վորությունից, այլ հասարակ զբագիառությունից, — այդ պատճառով յերբեք չե կարող ընդունվել վորպիս ձեռնարկ ուսումնարանաց մեջ, ուր պիտի գործ գրվի ուսումնասիրությունը նրա մաքուր ձեռվը և վորոշ քերականական կանոններով, գիտության ձեռքով մշակած և մատնագիտությամբ ճոխացած։ Այդպիսի լեզվի դասատվությունը կարեոր և թե գիտության համար և թե յերիտասարդաց բարոյական կրթության համար, վորպեսզի ուսանողներն ամեն բանի մեջ տեսնեն ճշտություն և վորոշ ձեռք և վոչ թե կանոնների անհաստատություն, վորոնցով, ինչպիս ինքն Արովյանն ել չե կարող չխոսառվանել, լիքն և նրա գիրքը։ Նրա ընորած Յերեանի քարբառը միայն այն ժամանակ կարող է ուսումնասիրվել գառաջաններում, յերբ կստանա վորոշ ձեռք և որենքներ, իսկ այդպիսի մի աշխատություն վորեե անհատի ուժից վեր ե, ու միայն ժամանակը և ժողովրդական հոգով և հասկացողությամբ արտադրած դրական աշխատ-

ություններն են, վոր կատարում են այդ դորձը։ Ընդումին պատիվ ունիմ վերադարձնել Արովյանի ձեռագիրը» *):

Արովյանն, ինչպիս յերեում ե, ոտիպված եր հաշվի նստել մանկավարժական խորհրդի կարծիքի հետ։ Նա մի վորոշ չափով «Նախաշավիղը» մշակում է։ 1843-ին նա կրկին զիրքը ներկայացնում է քննության։ Նույն թվի գեկտեմբերի 23-ին Թիֆլիսի գիմնազիոնի մանկավարժական խորհուրդը քննելով «Նախաշավիղը» գանում և այն այժմ պիտանի և ոգտավետ գոլոցների համար, յեթե, ի հարկե, մի շարք թերությունների վերանան։ Մանկավարժական խորհրդի արձանագրությունն Անդրկովկասի գոլոցների վերատեսուչ Կուլիմինովին հետեւյալ գրության հետ ուղարկում է Յերեան, Արովյանին։

«Յերեանի զալառական գոլոցի տեսչի պաշտոնական առաջարկը առվեսնիկ Արովյանին։ 1845 թ. վետրվարի 19:

Նորին գերազանցությունն ուսումնարանական մասի պարոն կառավարիչը յուր անցյալ հունվարի 26-ին գրած № 131 թղթով վերադարձնելով հայ մանուկներին գրել կարգադրություններ համար սկզբունական ձեռնարկը, վոր գործ կաղմել եք հայ լեզվով, առաջազրել ե հայտնել Զեղ գիմնազիոնի խորհրդի յեզրակացությունը գրքի թիրությունների մասին, ավելացնելով, վոր յեթե գործ ուղղեք այդ թերությունները, ներկայացնեք գիրքը ինձ հետադա տնօրինության համար։

*.) «Արձագանք», 1896, № 102.

Գեներալ մայոր Շոամ յերկրորդի այսպիսի
առաջադրության մասին հաղորդելով Ձեզ, ուղարկում
եմ ի գիտություն և գիմնազիոնի խորհրդի այն ար-
ձանագրության պատճենը, վորը կազմված և այդ
առարկայի մասին»:

Այժմ մեջ բերենք գիմնազիոնի խորհրդի արձա-
նագրությունը. վորի (իչչես և վերոհիշյալ գրության)՝
բնագիրը գտնվում է Յերևանի Պետական Արխիվում:

"Копия с журнала составлялась в Педагогическом
Совете Тифлисской Гимназии 1843 года декабря 22 дня.

Совет Гимназии слушал мнение учителя ар-
мянского языка Аракатова и другое старшего учи-
теля Арзанова о рукописной книге, составленной на
Эриванском простонародном наречии г. учителем
Абовяном под заглавием: «Первоначальное руководство
для обучения детей чтению и письму на армян-
ском языке» и содержащей следующие статьи:
1) Предисловие к читателям; 2) наставления при
обучении детей чтению и письму; 3) буквы и скла-
ды; 4) слова односложные, двухсложные и мно-
госложные и 5) разные мысли, нравоучения, повес-
ти, басни, пословицы, молитвы, песни и описания
в стихах и прозе, переведенные большей частью с
языков европейских.

Учитель Аракатов находит следующие в книге
Абовяна недостатки: 1) сбивчивость в расположении
статьй, 2) мало примеров для чтения складов и
слов; 3) употребление букв... (а) вместо вспомога-
тельный глагола... (есть); 4) неуместную замену пе-

լութեր

հոնաց ուղարկությունում առելու
համաձայն Տարբաշուած Շնորհ-
լիք 1843 թվա. Շնորհ ՀՀ տակ

Եօնայի հնուուց Ծնունդ տպություն
Դրատուկու շաբաթական թուրք-
տօս, և արդու Տուրման շնորհ-
ությունուած հայուսական Առա-
վագուածությունու առաջնա-
քանուած ուրգություն առաջնա-
քանուած ու այլուր առաջնա-
քանուած ու ուղարկուած առաջնա-
քանուած ու պատուած ու առաջնա-
քանուած ու ուղարկուած առաջնա-
քանուած ու պատուած ու առաջնա-
քանուած ու ուղարկուած առաջնա-
քանուած ու պատուած ու առաջնա-

Թիֆլիսի գիմնազիայի մանկավարժական խորհրդի
արձանագրությունը ևնախաշավորի» մասին:

(Անվանություն ՀԽՍՀ Պետական Արխիվի)

которых общепонятных книжных слов и выражений простонародными разговорными; сверх того на стр. 44 употребление выражений, означающих народное насмешательство, на стр. 9 неправильное разделение некоторых слов; и в заключении редакции полагает, если недостатки будут исправлены, возможным п даже полезным напечатание «Первоначального руководства для обучения детей чтению и письму на армянском языке». Старши учитель Арзаков ссылается на прежнее свое мнение, изложенное им 1841 года 5 июля в журнале Совета Гимназии и не говоря ни слова о прежде замеченных им в книге Абовяна недостатках, как-то: а) о странном способе чтения букв; б) о неуместности пословиц армянских и статьи о тифлисском армянском кладбище, которые могут возбудить в учащихся смех и в) о неправильном написании некоторых слов, исправлены ли эти недостатки или нет, заключает, что рукописная книга Абовяна, составленная на эриванском простонародном наречии, более прочих наречий чистом и близком к книжному наречию, при недостатке подобных сочинений, может с пользою служить руководством при обучении армянского юношества чтению и письму в писших классах уездных училищ.

Совет Гимназии, приняв в уважение единогласное заключение редакторов о книге Абовяна, положил, что рукописная книга Абовяна может быть введена в училища Закавказских как первоначаль-

ное руководство для обучения детей чтению и письму на армянском языке, если: а) автором будут исправлены выше замеченные недостатки и если б) не будет найдено ничего противного правилам цензуры, особенно в статьях, переведенных большей частью с языков европейских.

Подлинный подписали: директор И. Кушинский, Инспектор Рокковшенико, Старшие учителя: Д. Арзанов, Стеллеский, А. Филадельфи, Шестаков, учитель грузинского языка Карганов. Скрепил Секретарь Совета Гимназии, Старший учитель Филиппьев. Верно: Письмоводитель Дирекции Закавказских училищ. «Подпись»).

4. «Նախավագի» պատմության այդ շրջանը, համեմատաբար, ամենամութն է: Ավանդաբար մեզ հասել ե միայն հետեւյալը. Աբովյանը տպագրության ե հանձնել «Նախաշավիղը» և այն վոչնչացվել ե: Ցերք ե հանձնվել գիրքը տպագրության, և վ ե վոչնչացրել, լինչպես, այս բոլոր հարց'րը դեռևս չունեն իրենց պատախանը:

Նախ առաջին հարցի մասին:

Դժբախտաբար վոչ մի հիշատակություն չի պահպանվել գրքի տպագրության ժամանակի մասին: Այն տվյալը, վոր իրը թե «Նախաշավիղը» տպագրը վել ե 1842-ին, ճիշտ չե: Միայն այն փաստը, վոր «Նախաշավիղի» ձեռագիրը դեռևս 1843-ի դեկտեմբերի 22-ին Թիֆլիսի գիմնազիայի մանկավարժական խորհրդի քննության առարկան ե յեւել, նշանակում ե 1843-ին տպագրված լինել չեր կարող Ուրիմ, մոռ

ե յենթադրել, վոր միայն հաջորդ տարիներին Արտաշանը տպագրության հանձնած կլինի իր աշխատությունը:

Ի միջի այլոց նկատենք նաև այս, թե Արովյանը ի՞նքն ե հանձնել «Նախաշաղավիղը» տպագրության, թե դպրոցների վարչությունը կամ մի այլ հաստատություն, նույնպես հայտնի չե:

Ավանդաբար մեզ հասել ե այն կարծիքը, թե նո գժոն «Նախաշաղավիղ» անհաջողություններից, ինքն իր ծախսով տպագրել ե տվել գիրքը:

Առաջին «Նախաշաղավիղ» մասին պահպանվել է միայն յերկու աղբյուր: Դրանցից մեկը պատկանում է Պերճ Պոռշյանին, մյուսը՝ Մ. Տեր-Աղարյանին: Արովյանի առաջին ընդարձակ կենսագրությունը գրել ե Մ. Տեր-Աղարյանը «Մի քանի խոռք Ապովյանի վերա» վերնագրով: Այդ կենսագրական ակնարկում Աղարյանը հիտեյալն ե գրում «Նախաշաղավիղ» մասին:

«Նա [Արովյանը] իր կենդանության ժամանակը սկսել ե տպել յերեխաների համար գրքույկ այսպիսի մակագրով, «Նախաշաղավիղ կրթութեան ի պէտս նորավարթից, յերկու մասն»: Այս գրքույկը բովանդակում ե յուր մեջ հայերեն այբուբենը, հայոց քերականություն և քանի մի հատված յերեխաների կարդալու համար: Հայտնի չեն եր պատճառը, վոր նա չեր կարողացել վերջացնել որա տպագրելը: Մենք տեսել ենք այս գրքույկի տպած թերթերը, վորոնց տիպը շատ անպիտան ե: Զեկնի թե այս հանգամանքն ե շատ անպիտան ե: Զեկնի թե այս հանգամանքն ե առաջանառ դառել չտպելուն, սակայն ուրիշներիցը այսպատճառ դառել չտպելուն, սակայն ուրիշներիցը այսպես լսում, թե հանգույցալ կարապետ վիճակավոր առքենթիթկոպոսը տեսնելով, վոր այս գրքույկը

աշխարհաբար լեզվով ե շարադրված, տպագրելը արգելի ե: Յերեսում ե, վոր բարձր որբազանը ուրիշների պես կարծում եր, թե աշխարհաբար լեզվով բան կարդալ ու գրելը աղքի կործանումն ե *):

Մեջ բերված հատվածն անդրանիկ խոռքն ե հայ պարբերական—գրական մամուլում, վոր ասվել ե «Նախաշաղավիղ» մասին:

ի՞նչ ե պարզում Աղարյանի վկայությունը:
ա) Աղարյանն ինքն իր աչքով տեսել ե «գլուքույկի տպագրված թիրթերը»:

բ) Աղարյանը միակն ե, վորի վկայությունը հնարավորություն ե տալիս կորած անվանաթերթի բովանդակության մի կարենոր մասը վերականգնել:

գ) Աղարյանը պարզում ե գրքի բովանդակությունը, վորը գրեթե ամբողջությամբ համընկնում ե պահպանված մի որինակի հետ **):

Մյուս վկայությունը պատկանում է Պերճ Պոռշյանին:

«Գյուղական վարժապետներ» վերնագոի տակ Պոռշյանը մի մեծ հոգվածաշար տպագրեց «Արձագանք»-ում: Վերջին հոգվածներից մեկում Պոռշյանը պատմում է Արովյանի այցելությունն Աշտարակի գպրոցին, ուր մանուկ Պոռշյանը սովորելիս ե յեղեւ Պոռշյանը «Հուշեկներ»-ումն ել ե պատմել իր առա-

*) Ակունկը, 1831, եջ 541:

**) Աղարյանը հիշում ե նաև «Հայոց քերականություն», վորը չկա այս գրքում: «Նախաշաղավիղը» Արովյանը բաժանած է յեղեւ յերկու մասի, առաջին մասը հենց այս գիրքն ե, իսկ յեղեւ բորդ մասը՝ քերականությունը, վորը մինչև որս հրատարակված չե: Քերականության ձեռագիրն անվթար պահպում է Արովյանի թղթերում:

չին հանդիպումը Արովյանին *): Դրեթե նույնը
պատմելով, Պոռշյանը «Գյուղական վարժապետներ»-
ում մի քանի նոր և ուշագրավ տեղեկություններ և
հաղորդում «Նախաշաղվղի» մասին, վոր ուրիշ աղ-
բյուրներում չի կարելի գտնել:

Ի՞նչ և պատմում Պոռշյանը.

«—Յիս քեզ մի գիրք կղրկեմ. վարժապետ,
կարելի յե դու նրանից մի քան հասկանաս և այն-
պես սկսես սովորցնել, ասաց նա [Արովյանը] մի որ,
յերկար մի քանի վերա բացատրություններ տալուց
հետո, այն գրքի մեջ իմ առած գառատվության յե-
ղանակը մանրամասնորեն նկարագրած ե, այնուհե-
կտեսնես, վոր ավելի հեշտ և յերեխային տառերի
հնչյունների հետ ծանոթացնել, հնչյուններով ձայ-
ները միացնել քան թե այր, բեն անուններ տալով.
այն գիրքն իմ շինածն ե և աշխարհաբառ ե. դու նրա
առաջարանը լավ կարդա:

—Շատ լավ, աչքիս վրա, տեր, հավանություն
եր տալիս խալիքեն, բայց մենք այն խոսակցությու-
նից վոչինչ չհասկացանք...

Խոռքիս վերջումը ավելորդ չեմ համարում առել,
թե Արովյանցն իր խոստումը կատարեց. նա վոչ
միայն մեզ համար շաքարեղեն եր ուղարկել. նա վար-
ժապետին ուղարկած գրքիցը մի մի հատ ել մեր տու-
ջին դաստան համար և պարզեց գրել:

Վոչ այլ ինչ եր այն, յեթե վոչ յուր սեփական
աշխատությունը՝ «Նախաշաղվղը» Արգանյանց տպա-
րանումը տպված:

*) Պերճ Պոռշյանց, «Հուշաշաղվղը», Ա. շրջան, Թիֆլիս, 1894
էջ 17—23:

Յերկրորդ տպագրության մեջ պակաս ե գրքի
բան ծուծը և նպատակը—նորա մեծ հառաջարանը,
վորի մեջ խոսքը փիլիսոփա ուսուցիչներին դարձ-
րած սովորեցնում և հնչական ձեր և խնդրում աշ-
խարհարաբով տանել դաստվությունը. պակաս են
նույնպես մի քանի լավ վատանագրությունը:

Հիշյալ հառաջարանից յերեւմ ե, վոր Արովյանցն
և առաջին անգամը սկսել մեր մեջ հնչական մեթոդան՝
զհո 40-ական թվականներում:

Ավասոս, վոր մեր ունջ ու պուճախում և վոչ
ընկերներին մոտ չգտա վերջին տարիներս այն
գրքույթը:

Արժեր, արգարե, նորա հառաջարանը տպագրել:
Այն ժամանակ Խաչատուր Արովյանցը կհամար-
վեր մեղանում և առաջին մանկավարժը » *):

Պոռշյանի հուշերը լրացնում են Ազարյանի հա-
զորագածը. Ազարյանի վկայությունը պարզեց կորու-
փած անվանաթորթի, ճիշտ ե, շատ կարևոր, բայց
միայն մի մասը, վերնակիրը: Պոռշյանը լրացնում
է վկայությունը հայանելով, թե գիրքը վոր տպարա-
նումն և տպագրվել: Ազգպիսով, պարզվում ե նաև
տպագրավայրը, այսինքն՝ այն քաղաքը, վորոնեղ
տպագրվել և «Նախաշաղվղը»: Արգանյանների տպա-
րանը դանվում եր Թիֆլիսում, ուրեմն գիրքն ել
տպագրվել և այնուհետ:

Պոռշյանը, դժբախտարար, չի անդրադարձել
մի կարևոր հարցի, վորի մասին վորոշ հիշատակու-
թյուն կա Ազարյանի մոտ. դա գրքի ճակատագրի
հարցն ե:

*) «Արձագանք», 1890, № 2:

Ի՞նչ յեղավ գիրքը։ Մի բան պարզ ե—գիրքը լույս չի տեսել։ Պատճմուը։ Այդ մասին վոչ մի ուղղակի վկայություն գոյություն չունի։ Կան միայն յենթադրություններ։ Միակ աղբյուրն առայժմ Աղարյանն ե։ Աղարյանն առաջ ե քաշում յերկու յենթադրություն, ձեռնպահ լինելով, զրանցից վորեւ մեկին հավանականություն տալուց։ Նա անում ե իր յենթադրությունը և ապա հաղորդում ուրիշներից լսածը։

ա) գրքի տպագրությունը յեղել ե անպիտան և Արովյանը չի կամեցել այդ ձեռվ գիրքը լույս աշխարհ հանել։

բ) արքեպիսկոպոս Կարսապետը լսելով, վոր Արովյանի գիրքն աշխարհաբար լիզվով ե գրված, արգելել ե նրա տպագրությունը։

կա և մի յերբորդ վկայություն, վորի հեղինակն ե Ղաղարոս Աղայանը։

Ինչպես հայտնի յե, Աղայանի թղթերումն ե դանվել առաջին «Նախաշալավղի» տպագրված մի հատիկ որինակը։ Աղայանը մի բացատրական թուղթ ե դրեւ, ըստ յերևութին հրապարակելու համար։ Վորքան մեզ հայտնի յե այդ բացատրականն անտիպ ե^{*)}։

Բերում ենք թուղթն ամբողջությամբ։

«Հայտնի յե, վոր Խ. Արովյանը առաջինն ե յեղել մեղանում, վոր հնչական յեղանակով մի այբբենարան ե տպագրել։ Սրա յերկրորդ մասը՝ իբրև ընթերցարան «Նախաշալավղի» կրթութեան ի պէտ նո-

^{*)} Այդ թուղթն ոգտագործել ե ականավոր գրողի վորդին, ընկ. Մուշեղ Աղայանը «Նոր ուղղագրության պատմական ակտը» հոդվածում («Խորհրդային Հայաստան», 1922, № 73)։

բավարժից» վերնազրով տպագրեց Հ. Ենֆիաճյանցը, իսկ առաջին մասից չի գտնվում վոչ ձեռագրեր և վոչ տպագրված։ Արովյանի առաջին կենսագիրը «կոռունկ» ամսագրի 1861 թվականի հուլիսի տետրակում գրում ե այս այբբենարանի մասին հետեւյալը՝ «Մենք տեսել ենք այս զրքույկի տպած թերթերը, վորոնց տիպը շատ անպիտան ե, Զլինի՛ թե այս հանգամանքն ե պատճառ դառել չտպելուն, սակայն ուրիշներիցը այսպես ենք լսում, թե հանգույցյալ հարապետ վիճակավոր արքեպիսկոպոսը տեսնելով, վոր այս զրքույկը աշխարհաբար լեզվով ե շարադրված, տպագրելը արգելել ե»։

Հավանականն ավելի այն ե, վոր մինք ուսումնաբաններ ու ուսուցիչներ չունեյինք, իսկ յեղածներն ել տերտեր-տիրացու-այնպիսիք եյին, վոր չեյին կարող ընդունել հեղինակի նորամուծությունը։ Նա առաջարկում եր այս, բեն ասելու տեղ—առել ա, բը, զը։ Նոր այբբենարանը չուներ՝ այբ-խե-չա-այբ-ժե-ճե-ռա, — այլ դրանց տեղ բովանդակում եր աշխարհիկ բարոյակրթական ու դյուրամատչելի հոգլածներ։ Թե այդ այբբենարանը տպագրված ե յեղել անմիջապես, վորա ապացույցն այն ե, վոր շատերն են տեսել դրա մեկ որինակը ինձ մոտ։ Վորպեսողի մեր անման հեղինակի այս մի հատիկ որինակը չկորչի, լավ կլինի, վոր սա պահպանվի մեր աղգային հաստատություններից մեկում։

Այս հանգամանքից ոգտվելու նպատակով, յես առաջարկում եմ մեր կարողավոր մարդկանց կնել

այս գիրքը մի հակաբ ոռւբլով, իսկ այդ գումարը խառն նել հեղինակի հուշարձանի ոգտին հավաքվածին» *):

Աղայանի յենթագրությունը մոտ ե գրքի արդեման մասին լեզած վարկածին իսկ այդ վարկածը պիտք ե համարել ամենահավանականը: Ինչպես յերևում ե, «Նախաշավիղը» դարձել ե ժամանակի պահպանդական-էղերական մտայնության դոհը:

Մի դիտողություն ել այդ հարցի շուրջը:

«Նախաշավիղի» հարցին անդրադառնալիս Արովյանի մասին հոգվածներ և ուսումնասիրություններ գրողները առում են, վոր «Նախաշավիղը» այրվել ե, յենթարկվել ե հրադասության (առւտոդաֆեյի); Վոր կղերականույցան կողմից արգելվելուց հետո «Նախաշավիղը» կարող եր այրվել, մի պահ անդամ կառկածի առարկա չի կարող լինել Բայց ինչ փառական հիմք ունեն այդպիս ասողները, վերաեղից են վերցրել, հայտնի չե: «Նախաշավիղի» պատմությանը

*) Աղայանի մոտ մի անճշտություն կա, նա կարծում ե, թե «Նախաշավիղը» կազմված ե յերկու մասից—այբբենարան և ընթերցարան և նախաշավիղի առաջին մասը, այսինքն՝ այբբենարանը, Աղայանի կարծիքով հրատարակել ե ինքը՝ Արովյանը, իսկ յերկրորդ մասը, ընթերցարանը, մնացել ե անտիպ և լույս ե ընծայել Հ. Ենթիանյանը: Արովյանի և Ենթիանյանը հրատարակած «Նախաշավիղները» վոչ միայն նույն գործ առաջին և յերկրորդ մասերը չեն, այլ ինքնուրույն և շատ բանով իրար նման, շատ բանով ել իրարից տարբեր գրքեր են: Այդ մասին ավելի մանրամասն կիսումի հետո, առայժմ նկատենք, վոր Աղայանը սխալ վում ե, յերբ կարծում ե, թե Ենթիանյանը հրատարակածը միայն ընթերցարան ե, առանց այբբենարանի, կամ ել Արովյանի հրատարակածը միայն այբբենարան ե, առանց ընթերցարանի թե մեկը, թե մյուսը ե՝ այբբենարան ունեն, և ընթերցարան:

վերաբերող վկայագրերի ու հիշողությունների մեջ, վորքան հասրավոր յեղալ պարզել, այդ մասին հեռավոր ակնարկ անդամ չկա:

Դննադատական գրականության մեջ «Նախաշավիղի» այրվելու մասին առաջինը խոռոչ ե Յեղագիպը*): Այնուհետև Շահաղիղի որինակով կրկնել են ուրիշները: Շահաղիղը՝ իրքի բանասեր միշտ յեղակացություններ և հանում ունենալով մի վորոշ փառական հիմք: Այս անդամ ել նա իր ասելով հիմք և ընդունել Աղայանի ասածը: Ահա ինչ է գրում Շահաղիղը... «վորմանց անեկով ել (Աղայանցի) Թիֆլիսի ժամանակի առաջնորդ կարապետ յեղիսկոպոսի հրամանով տպագրված որինակները հավաքվել այրվել են, իրքի աշխարհաբար լեզվով գրչած աշխարհաբարի ձեռնարկ»:

Շահաղիղի խոռքը Աղայանի այն գրության մասին և, վոր քիչ առաջ մեջ բերվեց ամբողջությամբ: Աղայանի այդ գրության մեջ այրելու մասին վոչ մի խոռք չկա: Բայց այդ, կարապետ յեղիսկոպոսի անվան հետ կապված վարկածն Աղայանը մեջ ե բերել Աղարյանից, հիշատակելով նույնիսկ աղբյուրը, մի բան, վոր շատ լավ հայտնի յե Շահաղիղին:

Այսպիսով, Շահաղիղը ակամա դարձել ե ինքնահար վարկածի հեղինակ:

5. Ծերկու «Նախաւափիլ»: Այս բոլոր ձախորդություններից հետո Արովյանը, ինչպես յերեսում ե, ոկտում և կազմել մի նոր «Նախաշավիղ», վորը նրա մահից հետո, 1862-ին լույս տեսավ Թիֆլիսում, չ. Ենթիանյանից հրատարակությամբ:

*) «Տեղեկագիր Դիտության և Արվեստի ինստիտուտի», 1928, № 3, էջ 139,

Աբովյանը, սւրեմ, ժառանգության և լողել յերկու «Նախաշավիղ»։ մեկը ույս և տեսել իր կենդանության որով, մյուսը՝ մահից հետո։

Այս յերկուօք չպետք է շփոթել իրար *):

Գրատերների շրջանում գրեթե միշտ մի հեռավոր կամած և յեղել, թու արդյոք առաջին «Նախաշավ! զը» Աբովյանի հեղինակությունն են **):

Յերկու «Նախաշավիղների» համեմատական քննությունը ցույց է տալիս վոչ միայն այն, վոր այդ յերկու տարրեր գրքերը միևնույն հեղինակին են դատկանում, այլ և այն, վոր յերկրորդ «Նախաշավիղի» հիմքը վերջին հաշվով դարձյալ առաջինն են։

Բնիքնք մի որինակ։

Կան նյութեր, վոր յերկու «Նախաշավիղների» մեջ ել կրկնվում են, միայն այն տարբերությամբ, վոր առաջինից վերցնելով՝ հեղինակը մի փոքր մշակել և յերկրորդի համար։

*) Որինակ, Պոռշյանի կարծքով Ենթաճյանցի հրատարակած այն Շնախաշավիղն է, վոր Աբովյանը հրատարակել և ի միմի որինակ ուղարկել Աշտարակի գլուխի աշակերտներին, միայն այն տարբերությամբ, վոր յերկրորդ հրատարակության մեջ բացակայում և առաջաբանը։

**) Որ. «Հայկական մատենադրություն» (այբուբենական ցուցակ ապագրության գյուտեն մ նշել առ մեզ յեղած հայերեն հրատարակությանց) գրքում (Վենետիկ, Միլիթարյան տպարան, 1833) Շնախաշավիղը կրթութեան ի պէտու նորավարժից»-ը վերագրված և Դեսրդ Աբովյանին և բոլորովին չի հիշված Ռաչա-տուր Աբովյանի գրքերի ցանկում (հջ 1):

Առաջին ժամանակակիցն

Աւղամօւրյուն

Ցանազարնորդի մեկը ձիով վըա մեկ քաղաքով անց եր կենուում, կամենալով փոքր ինչ բան տանել, հետո մանր փող չուներ։ Զեր գիտում թե փողոցը ինչ տեղուած է հեղինակը մի աղքատաց առու չանկարծ մեկ ողա պատահեցավի հանեց մեկ վուկի տվեց նրան վոր տանի փոթի և ուզածն առնի Յերկար ժամանակ քաշեց, տղայն չեկավ։ Նա կարծեց թե խարվեցավ, բայց արդարամիտ յերեխայն յետ յեկավ, ուզածը բերեց և մնացած փողը կամենում եր յետ տար նտարականը նրա արդարության վրա զարմացած, բերած փողը իրան բաշից։ Միթք նա չի ը կարող փ իշիր բայց տես թե նրա սիրած վմբքան արդար եր եսպես արդար մնա սիրելի յերեխան, և քո հացդ չի պակսիր *):

Յերկրոբդ «Նախաշավիղից»

Արդարամօւրյուն

Մեկ աղքամ տղա՝ ֆեորդ անուն՝ ծնողը չուներ և իր որական հացը զանե զուու, ման եր գաւնում, կամենալով փոքր ինչ բան տանել, հետո մանր մանր փող նա կենում եր, աղքատաց առու չկար, Անգամ մի գուշույը մեկ յերելի մարդու պատահեցավ և վողորմություն խնդրեց նրանից։ Սա կամելով նրան որդ տար, ձեռը ջեր (գրբպա ակ) տարավ, բայց տեսավի վոր ի բուրը փողը նարջել եր, բայց վորովին յերեխեն նրան ենակես քաղցր դիմու։ Ֆեորդը վաղը դիմու նայում եր, չկամեցավ վոր նրան առանց վողորմություն թողնի։ Ես պատճառավ քիմեն հանեց, մեկ վոսկի տվեց նրան և ասաց, ունա ես վոսկին նուրդա արա, հետո քեզ գրանից փոքր կամամ։ Ֆեորդը վաղը մոսկի դուր քանը (կրպակ) և փողը նուրդա արեց և յերը վերադարձավ, են յերեխի պարոնը ել են քուչումը ներ ծեմի նա վատ յերեխան լիներ, վողը կամենի և կիմախենը տուու, բայց ֆեորդ միտք արեց, լավ և աղքատ մն ու աշխարքի վրա, քան թե գողությամբ հարստանալ։

Եսպես սկսավ են պարոնին դտրանեւ մինչ վոր նրան մեկ ուրիշ քուչում գտասկ, Պարոնն ես աղքամ յերեխի արդարամը առության վրա մնաց զարմացած և իրեն համար պարտավորություն հրացնի։ Եսպես համար

մեկ արհեստավորի ավելց, և նա
ևս արհեստը սովորեցավ և հետո
իրան համար լավ մարդ դառավ:
Վերջին ժամանակն ել իրեն
ենպես արդար բռնում եր, փոր
ամեն մարդ սիրում, պատվում
և արդար ուստա ելին ասում
նըան *):

Կարող եւ այսպիսի առարկություն ծագել, թէ
բոլոր ընթերցարանների մեջ ել նման և ընդհանուր
նյութեր կան: Այդ ճիշտ ե, մանավանդ, վոր Աբով-
վյանը գերմանագիր բացատրականում զգուշացնում
ե, վոր «Նախաշավիղն» ինքը կազմել ե գերմանական
աղբյուրներից: Պարզ ե, վոր մեկ ուրիշն ել կարող
եր վերցնել նույն նյութը և հայերենի փոխադրելով,
զետեղել իր ընթերցարանում: Նյութը կմնար նույնը,
տարբել կլիներ միայն նրա հայերեն մշակումը:
Բայց ընդհանուր գծերը յերկու «Նախաշավիղների»
մեջ գրանով չեն սպառվում: Միենույն նյութը, վոր
Աբովյանի հորինածն եր, զրեթե նույնությամբ
կրկնվում ե յերկրորդ «Նախաշավիղն» մեջ: Նյութը
չափածո յեւ և կրում ե միենույն վերնագիրը յերկու
գրքի մեջ ել: «Ծնողասեր աղջիկն և մեծահոգի մե-
ծառուննա»:

Մի ուրիշ հարց ևս կա: Առաջին «Նախաշավիղն»
յոթանառուներկուերորդ եջի վրա կանդ ե առնում,
այսինքն պակասավոր ե: Չունենալով նույն գրքի յերկ-
րորդ որինակը ձեռքի տակ, դժվար ե վորսե յեզրա-
կացություն հանել, թե արդյոք գրքի միայն այդ
որինակն ե պոատ, թե գիրքը մրայն այդքան ե

*): «Նախաշավիղն», Տիկին, 1862, եջ 26—27:

ընկառութել ե ապա արգելվել *): Քժբախտաբար, այդ
մաշին վոյչ մի վկայություն չի պահպանվել: Բայց
այն նյութը, վորը զբաղեցնում ե զրքի վերջին եջը և
մյուս հչերի չլինելու պատճառով մնում ե անավարտ,
կա նաև յերկրորդ «Նախաշավիղն» մեջ:
Բերենք ընդմիջված նյութը և նրա շարունակ-
կությունը:

Ա Ե Յ Ա Յ Ո Ւ Ր Յ Ո Ւ Յ

Մեկ քաղաքում հանկարծ հըս-
դեն պատահեցավ: Թամին սաս-
տիկ լինելով, բոլոր տունք ու
շինվածք բոցն առավ: Սուգ և
աղաղակ վողորմելի ընակչաց
իմ աչքով տեսաւ: Մեկ փոքր
յերկնքն եր հասնում: Ով կա-
րաց՝ փախակի թանձը մուկին
բոցը չորեք կողմը բռնել եր և
դիշել եր շիներ Ամեն մարդ իր
յերեխայքը և ընտանիքն եր
ազատում:

Ա Գ Յ Վ Ա Մ Տ Ո Ւ Ր Յ Ո Ւ Յ

Մեկ քաղաք կըակ եր ընկել և
քիչ եր մասել վոր իսպա-
տիկ լինելով, բոլոր տունք ու
այրվի, վոչնչանա: Ենտեղ մեկ
շինվածք բոցն առավ: Սուգ և
բան պատահեցավ՝ վորը փոքր յես
աղաղակ վողորմելի ընակչաց
իմ աչքով տեսաւ: Մեկ փոքր
յերեխայքն եր հասնում: Ով կա-
րաց՝ փախակի թանձը մուկին
բոցը չորեք կողմը բռնել եր և
դիշել եր շիներ Ամեն մարդ իր
յերեխայքը և ընտանիքն եր
ազատում:

*) «Նախաշավիղն» աղբյուրներում այդ մասին անուղղակի
վկայություններ կան: Բայց յեղած տեղեկությունները հակա-
սական են: Ազարյանն հիմք ե տալիս կարծելու, թե «Նախաշավ-
իղն» տպագրությունը չի ավարտվել նա շատ պարզ նկատում ե.
«Հայտնի չի ինչ եր պատճառը վոր նա [այսինքն «Նախաշավիղն»] տպագրելը»:
Յեթե Ազարյանն վկայությունը ճիշտ համարենք, ապա կարող
ենք կարծել, վոր գրքի տպագրությունը կիսատ մեալով կանգ ե
աւել հենց այն եջի վրա (77), վորը վերջինն ե պահպանված
մի հատիկ որինակում: Իսկ Պոռշյանի վկայությունը, կարծես,
ճիշտ հակառակն ե հաստատում: Պոռշյանի ասելով՝ Աբովյանը
Աշտարակի դպրոցի աշակերտներին մի քանի որինակ «Նախա-
շավիղն» ե ուղարկել: Ազարյանն ել Գրական Թանգարանում «Նա-
խաշավիղն» կից պահպան մի անավարտ գրության մեջ անուղ-
ղակի այն համոզումն ե արտահայտել վոր գիրքը տպագրվել ե
ամբողջությամբ, և իր ձեռքն ընկած որինակն ե միայն պահպ-

Աղնվական իշխան մին իր բուրքը ապրանքն համարյա թե յեղ եր գրել վոր աղքատաց և խըղաց ոգնական լինի, տեսավ՝ վոր մեկ փոքր յերեխա կրակի միջումն մերձ ի մաս մնացել եր նորա աղիսղորմ արտասուքը, կոչծալի ճայնը իշխանի սիրաը այրեց խորովեց: Զայն տվեց ժողովուրդյանն, յեթէ վոք այն յերեխային աղատի, հազար մասնեթ նրան պարզե կտա Բայց ո՞վ կարեր իր գլուխն այնպիսի սովորի վորձանքի մեջ պցեր

Իսկոյն մեկ աղքատ տղա առաջ յեկավ, կայծակի պես լինի կավ բոցի մեջը՝ և կրակի շեղը վառնահար անելով՝ զնաց յերեխային հանեց և իշխանի մոտ բերեց, Բարեկամ, ասաց իշխանն նրան գրկելով և փաթաթվելով, դու այսոր այն գործը գործեցիր, վոր քեզ գնչինչ վարձ չի բավականահար բայց առ ես փաքը գումարը և ք աղքատության համար գործ դիր:

«Միթե իմ կյանքն դրամնվ սկետք և փանառելի, պատասխանեց վեհանձն աղքատ վո՞չ ով հարգոյապատիվ իշխան ինձ համար այն եր մեծ փառք ու պարձանք, վոր աստված ինձ հաջողեց, այս խոհալի մանկան կյանքն աղատել, Յես դրա իդանքնությունը և ծնողաց ցավը մտածել այս գործը կատարեցի:

Են յերկրի թագավորը՝ վոր շատ վողորմած եր և ամեն մարդու հոր պես սիրում եր, տեսնելով ես տարաբախտ յերեխայի հալը, բոլոր խալսը կանչեց, մոտարեց և խոստացավ՝ թե ով վոր նրան աղատի հազար վոսկի փեշքեց և ստանա:

Ես հաղաղին մեկ աղքատ մարդ գլուխը յետ դրեց և լնկա / կրակի մեջը, չունքի մեկն եւս սիրտ չեր անում: Են սաստիկ բոցի միջով անցկացավ, և աստված նրան լսեղն կալով, նրա քաջասըրտությունն հաջողեցավ վոր ես աղնիվ գործը գլուխ տարափ:

Աչքերը քաղցը արտասունքով լցրած՝ յերեխին հանեց ու բերեց թագավորի առաջին դրեց: Բարեկամ, ասաց թագավորը, քեզ մեծ պատիկ և փառք և հարկավոր, վեր առ ինչքան կամենաս՝ մաւ դովլաթ, ինչ վոր ունիմ, քեզ չեմ խնայիր

Վո՞չ քո մեծությունը՝ ասաց աղքատը. աստված ինձ բավական փարձատրել ե՝ վոր ինձ ես գործը հաջողեցավ ու յես և ես խղճակի յերեխան կրակի ձեռիցը աղատ մնացինք: Ել ինչ կանեմ փողը կամ դովլաթը: յես ես յերեխի սիրուն՝ եղ բանն արի և գոչ փողի խաթեր Միթե հիմմը ելի վոր իմ կյանք մեկ քիսա փողի համար մատաղ անեյի, կամ ծագործը կատարեցի: Աստված մին:

արասցե վոր յես եսպես բանի և խեղճերին, յես ինձ համար մեկ համար վող ստանամ: Ինչ ես կոտր հաց ունիմ՝ ինչ բան՝ վոր արի, իմ պարտավկառությունն եր, և այժմ եղ փողն աղքատաց տուր, նոցա՝ դրանով ենուես հարստացել եմ, վորոնց տունն այժմ այրել իրան յին թագավորությունն ինձ են թշվառություն պետք [. . . .]*)

և խեղճերին, յեղճերին պատկեր աղատի:

Լավ վարավուրդ արեք՝ սիրելի յերեխայք՝ մեկ սիրտ վոր աղնիվ լինի, ինքն իրան իր վարձը կստանա **):

Թե ինչ նյութեր եյին գալու ուրանից հետո, դժվար ե ասել:

Սակայն զրքի միա ին վերջը չեր պակաս, այլև սկզբի մասը: Խոսքն այստեղ անվանաթերթի մասին չե, այլ այն եղերի, վորոնք հաջորդում են անվանաթերթին, մինչև իններորդ եջը, այսինքն, յերբ սկզբվում ե «Նախքան զատան վարժապետն սկսանի խռովը ընդ մանկանց»: Այս հանգամանքի վրա վոչ վոք ու շագրություն չի դարձրել: Համարելով այդ նախաբան, ընդունի են իրեն գոքի սկիզբ, ուշագրից ըլենելով, վոր նույն այդ նախաբանն սկսվում ե իններորդ եջից: Ուրեմն, ինչ նյութեր են յեղել մինչև այդ նախաբանը:

Անվանաթերթը, ինչպես բոլոր գրքերում, պետք ե զբաղցներ միայն յերկու եջ, այսինքն՝ մի եջ հեղինակի անունը, գրքի վերնագիրը, տպագրության վայրը, թիվը, տպարանի անունը. իսկ նրա մեջքին,

*) Տես՝ մեր այս հրատարակության 72 եջը:

**) Նախաշագիր, Տիեզիս, 1882, եջ 54—55:

առել ե յերկրորդ եջի վրա՝ գրաքննության թույլատվությունը: Մինչդեռ այս գիրքն սկսվում ե ինչպոք եջից: Մի զուցե ընդհանրապես չի տպագրվել գրքի այդ մասը: Զե վոր անվանաթերթն ել չի պահպանվել: Բայց վոչ մի տարակուսանք չի կարող լինել, վորովհետեւ Մ. Աղարյանը, վորն իր աչքերով տեսել և «Նախաշավիդ»-ի տպագրված թերթերը, հիշում ե անվանաթերթի պարունակությունը *): Պոռշյանն ել հիշատակում ե այն տպարանը, ուր տըպագրվել ե գիրքը **): Ուրիմն, անվանաթերթը, ինչպես և նրան հաջորդող մասը տպագրվել ե, բայց կորսվել ե հետագայում:

Մի ուրիշ հանդամանք ևս կա:

Բրոսսեն, «Նախաշավիդ» մասին խոսելիս, այն միտքն ե հայտնում, թե Արովյանը կրքոտ հարձակում ե գործել հոգեռորական դասի դեմ և այլն: Զգըտնելավ նույն այդ միտքը «Նախաշավիդ» առաջաբանում («Նախքան զգացն»...), կարծում ելինք, թե Արովյանն հավանաբար այն արտահայտել ե զրքին կցված գերմանագիր բացատրականում: Բայց, յերբ գտնվեց գերմանագիր տեքստը, այնտեղ ևս չհանդիպեցինք այդ մաքին:

Վորտե՞ղից, ուրիմն, Բրոսսեն կարող եր քաղել այդ միտքը:

Ահա այստեղից ել առաջացավ կառկած, վոր «Նախաշավիդը», բայց պահպանված առաջաբանից, ունեցել ե նաև մի ուրիշ ներածական մաս, ուր շոշափվում ե գրաբարից աշխարհաբարին անցնելու խնդիրը:

*) Շնորհած, 1861 հջ, 541:

**) «Արձագանք» 1890, № 2, եջ 36:

Բացի այդ, Բրոսսեն իր գրախառության մեջ առում ե, վոր կարճառուտ առաջաբանում հեղինակը շարադրել ե իր հայացքները մասնուկների և պատանիների գաստիարակության մասին մի այնպիսի ջերմությամբ, վոր պատիվ ե բերում նրա ջանասիրությանը: Այս ել չգտնվեց պահպանված առաջաբանում: Պարզ հետեւություն. յեղել ե մի ուրիշ առաջաբան ել, ուր այդ մտքերն արձարձվել են: Մեր այդ յենթադրությունն հաստատեց Թիֆլիսի գիմնազիայի մանկավարժական խորհրդի արձանագրությունը, ուր մեկ առ մեկ հիշված են գրքում տեղ գտած նյութերը: Արձանագրության մեջ ասված ե. «Նախաշավիդը... պարունակում ե հետեւյալ հոդվածները:

- 1) Ընթերցողներին ուղարկած մի հառաջաբան.
- 2) Խրատ յերեխաներին կարդալ գրել սովորեցնելու համար.

3) Տառերն ու վանկերը... և այլն:

Մեղ հառած «Նախաշավիդի» մի հատիկ որինակն սկսվում ե յերկրորդ հոգվածից, այսինքն՝ «Յերեխաներին գրել կարդալ ոսվորեցնելու խրատից», իսկ առաջին նյութը այսինքն, «Ընթերցողներին ուղղված առաջաբանը» (ինչպես նա կոչված ե մանկավարժական խորհրդի արձանագրության մեջ), այս գրքում չկա:

Պոռշյանի հիշողությունները մի վորոշ հիմք են տալիս կարծելու, վոր այդ առաջաբանը ևս պահպանվել ե Արովյանի թղթերում: Արովյանի յերկրորդ «Նախաշավիդ» ձեռագրի մեջ կա մի առաջաբան «Նախագդեցություն» վերնագրով, գրաբար լեզվով գրված: Հ. Ենթերճյանը դուրս է թողիլ այդ նաև

իսաբանը: Աեր յենթադրությամբ «Նախազգեցությունը» պետք և լինի այն նյութը, վոր իբր առաջարան դբաղեցրել և մինչև աշակերտների համար գրված խրատի՝ մի ժամանակ յեղած, իսկ այժմ կորած եջերը:

Բերում ենք առաջարանն ամբողջությամբ:

«ՆԱԽԱԶԴԻՑՈՒԹԻՒՆ

Քանը կտրվել ա, նստել ա՝ դարդակ դարդակ գլխիցը դուրս տվել: Կայիս մօսալեքը մեր պառաւներն ել գիտեն և այլն: Այսպէս դատեսցեն դատաքնիչք իմ՝ ի ձեռն առնուլն անդ զայս գիր, որոց միտք՝ ի ծայրագոյնս և ի վերինս հանապազ օդապարեն՝ զանց զայնու արարեալ՝ ոլ ընտելն է, բնական և սովորական մտաց և հոգւոյն բանականի: Այլ խօսիլ ընդ մանկանց՝ լեզուաւ մանկական, ածել զնորակիրթս աստիճան առ աստիճան՝ ի վեր, նոցա միայն է յատուկ՝ որոց քաղցր է անսեղ հոգի և թոթով պապաջունն տղայաւան, որոց յիշողոթիւն գեռ կենդանի ունի զամենայն իղձ և ցանկւթիւն, գկերպ դատողութեան, նա իսկ և զիսաղս անգամ մանկական իւրեանց հասակի: Որք՝ ի փորձոյ ծանեան զմատաղ հոգի տղայոց՝ որոց բիւրիցս ախորժելի է զպատմութիւն ինչ լսել հասարակ՝ զիրաց սովորական, քան բեռնել զմիտս խրթին իմն քերթուածովք հոետորական:

Ճիգն ամենայն քաջանմուտ դաստիարակի պարտի յայս սակս զայն միայն նպատակ՝ ի սկզբան ունիլ առաջի՝ տքնիլ բանալ զմիտս աշակերտելոցն ինքեան՝ յըմբոնումն և ի ճանաշողութիւն ամենայն առ նոսա մատակարեալն ուսմանց, բայց իւ հնար

իցէ՝ ի կատար ածել զայս: այն ինչ ամենայն ուսումնական գրեանք Հայկազեանս մեր լեզուի՝ գըլթովին թէ տրամադրութեամբ բառից և ոնոյ, և թէ նիւրովք զրուածոցն օտար ևն և անընտել միանգամայն սովորական բարբառով, հագեկան կարողութեանց և բնօ ան ախորժունակ գեռահաս մանկանց:

Ճիմ ծանր և զգուելի պարտի երեխիլ նորավարժին այն գիրք՝ որոյ տառք մեռեալք՝ նշինչ իւիք զուարձացուցանին զմիտս և զերեակայութիւն նորա, ոչ իւ իք բանան և լուսաւորեն զնոգի նորա: Ուր հարիւրամեայ ալեոր ոմն առաջի առնէ նմա զիւրոյն ցամաքեալ զազաթան զծնունդ՝ ի բարբառս անլուրս՝ ի բանս խրթիմացս, ուր փափուէ սիրտ նորա նշինչ գտեալ ճարակ ինքան ախորժալուր, այնպիսի զզուանօք ի գիր իւր հայի, որպես հային սովորավարժանկունք՝ ի խստաբարո ծերունի ոք՝ որ զպավազական բարկութեան՝ ի ձեռին կալեալ՝ զրկել կամի զնոսա յանուեն խրեանց խաղուց: Քանի բախտաւոր համարին զինքեանս յազատանալն նոցա յայսօթինակ բռնութենէ. և եթէ ծնող ևս իցէ նոցա, նոքա զման առաւել ցանկան տեսանել, քան զկերպարանս սոյնարինակ խստառուն փիլիսոփայի:

Զսոյն նւրգործութիւն ունիցի և ամենայն ուսումնն որ չէ յարմար բնական ձգտմանց մանկանց: Ամենայն տառք իրեւ զփուշք ծակոտիչք վիրաւորեացեն զհոգի նոցա թարժ: Այս իսկ է պատճառն. զի բազմիցս դեղերեալ նոցա յուսմուն՝ մնան տակաւին անկիրթ, համարին քաջագործութիւն իմն գերօրինակ՝ ընթեռնուլ վարժ, բայց թե զինչ ընթերցանն չէ ինչ նոցա փոյթ գիտելու Այլ թե հասունացեալք իսկ զայն մա-

տեան միայն ընթեռնուն ախոշժանսք, զոր հառկանսն, քանի ևս առաւել պիտոյ է և դեռահասից բանալ զայս ճանապարհ, որոց ամենայն հոգեկան զօրութիւնք դեռ յաղջամզջի կուրութեան խարխափին, որոց միտք, զատողութիւն, երեսկայութիւն, յիշութիւն, հանձար՝ պարտին ուսմամբ պարզիլ և լուսաւորիլ, այլ ոչ օրբստորէ նոեմանալ և խանդարիլ, որպես լինի հասարակօրէն ցայս վայր:

Քանի՞ վայելուչ և իմաստալից դպրոց՝ բնութիւն, որ շրջապատի զմեօք: Գործառնութիւնք մարդոյ, զորս յամենայն բողէի տեսանեմք առընթեր մեր: Առարկայի սովորականք՝ որք շուրջ զմեօք: Իմանալ զանուանո, զձևո, զդոյն, զորպիսութիւն, զնպատակ, զնիւթ, զներգործութիւն ամենայն իրաց, ճանաչել և դատել զամենայն՝ զոր լոեմք և տեսանեմք, զինչ այլ ևս ծայրագոյն ուսումն հնար իցէ ցանկալ մարդոյն բանականի: Բայց առաջնորդ ամենեցուն այսոցիկ է լեզուն, առանց որոյ մեռեալ է համայնն վասն մեր և ո՛չ կարե ունիլ զներգործութիւն ինչ:

Ո՞ւմ չէ յայտնի: թէ որքան օտարացեալ է դրաբառ մեր լեզու՝ ի հասարակ գործածականէն և քանի՞ ամք հարկաւորին ՚ի լիակատար ճանաշումն կանոնաց նորա: Մինչ ցայն վայր տանջին մանկունք ողորմելիք: Վարժարանն թուի նոցա տանջարան, ուսումն տանջանք և պատիժ սոսկալի, և պատառ այսոցիկ ամենայնի է խրթնութիւն լեզուին:

Յայս սակա՞ և ոչ յանդուզն ձգտմամբ առ ՚ի բառնալ գլխովին զկիրառութիւն վաեմ լեզուի՝ որպես ոմանք ՚ի բարեմիտ անձանց բողոք բարձին և բառնան զինէն առ պարզամիտո, այլ բուռն եռանդիամք՝

նպատա ինչ մատուցանել դիւրընտել՝ մերոցս համազ զի մանկանց զառաջին անդ մուտտ յուսմունս գիտութեանց՝ հարկեցայ պատքաստել զայս ուղեցոյց դիւրատար, որով գհնէ՝ զրավարժութիւն նոցա հառարակ՝ հեշտին իմն եղանակաւ բացցի: Թհղ պարաւագիր լիցին՝ որք կամինն՝ ինձ պատրաստ ևմ զամենայն սիրով ընդունիլ, և յոյս իմ հառատառուն է՝ թէ ձեռնարկութիւն իմ այս որքան նորամել և տարօրինակ իմն երեսոցի, սիրելի այնու ամենայնիւ լիցի անոցիկ, որոց վասն պատրաստեցան:

Կամի հաւաստիլ զասացեալ՝ թո՛ղ ըստ աստուծոյ գաստիարակն՝ նախքան զուսուցանելն զմանուկն՝ ընթերցի պատմութիւն ինչ կամ ոտանաւոր աստի, և բան ինչ յարդի եղեալ սովորական գրեանց, այսինքն՝ ՚ի ժամագիտէ, սաղմասէ, կտակարանէ և այն, կամ բացայալեսցէ զմասունս բանի և զկանոնս քերականութեան նախ ըստ սովորական ձևոյն, ապա ըստ այսմ՝ որ ՚ի սմին աւանդի, յայնժամ ինքնին փորձիւ ծանիցէ թէ ո՞ր մատեան ցանկալի իցէ երեխային ունիլ վասն իւր: ՓոքՃն՝ անաշառ դատաւոր է յամենայնի:

Զայս մի ինչ ևս արժան համարիմ ծանուցանել՝ թէ յուսումնաբանս, ուր զարդիս այնքան բազմացեալ են առարկայք գիտութեանց և հազիւ որոշին ժամք չորս յընթացս բոլոր շաբաթու յուսումն մերս լեզուի, անհնարին լինի յայսքան սուզ միջոցս տալ զմանաւոր տեղեկութիւն ինչ զնմանէ, յայս սակա ուսուցիչն կարէ կից ընդթերցանութեան և զեռահամանկանց անգամ՝ տալ զհամառոտ ծանօթութիւն ինչ զգիսաւոր կտնօնաց լեզուի և զանազան մասանց

Նորու առանց ցուցանելոյն թէ նոքա ուսանին զբութա-
կանութիւն (որ անուն՝ մեծահնչիւն իմն երեխ լսե եաց
առանց ունելոյ զիւր իսկական շահ). և 'ի ծանօթա-
ցուցանելն զնոսա ընդ կանոնաց երկո ց լեզուաց մե-
րոց 'ի փոփոխութիւնս բառից, այն է 'ի հարվածութա-
կ 'ի խոնարիմաւնա և 'ի ծանօթութիւնս յաւանդեալսն
առտանօր, ապա կարէ յայնժամ դարձուցանու տալ
զամենայն պատմութիւնս, ոտանաւորս, և զնամակն
ոլարունակեալս 'ի ամին 'ի գրաբառ լեզու՝ որովք
դիւրացեալ և առատացեալ միտք մանկանց՝ ինքնին
արձակ համարձակ վարեցին ինդապատար՝ կատա-
րելագործել զինքեանս 'ի գիտութիւն հայրենի իւր-
եանց բարբառոյ, զորմէ և խօսեցի նոյնպիս և յըն-
թացս գործոյս: Յետ որոյ մարթ է 'ի ձեռու առնուլ
զվաեմ գրուած ինչ՝ որպիսի է Մատն Արէլի, Տելեմատ
և այլն և այնքան յաճախ տալ ընթեռնուլ մանկանց,
մինչեւ ինքեանք ևս դօրեսցին ըստ նոցայն հաղինա-
կութիւն զրել և շարագրել: Յայս միտս պարտին ուս-
սանողք 'ի բերան առնել զամենայն դասս իւրեանց,
յաճախ կրկնել և անգիր գրել. ուր ըստ իմ կործեաց
չէ այլիս հարկաւոր ճարտասանութիւն ինչ: Այսպես
կրթեցան ատենաբս նք, բանաստեղծք, հոետորք Յու-
նաց և Հոռվմայեցոց, զի զարծնակտնութեամբ մանա-
վանդ՝ քան իմացա տնութեամբ ուսան զիւրեանց լե-
զուս: Այսպես բազումք 'ի դիւանատունս յաճախ
գրութեամբ զամ մը առաւել ևս ուսանին քաջ գրել
և յայտնել զմիտս իւրեանց. քան զտմա տան ի փար-
ժատունս լոկ արածութեամբ կանոսաց քերականու-
թեան և ճարտասանութեան»:

Ի՞նչ էիմք կա մատածելու, վոր այս ռռաջաբանը
դրվել ե առաջին «Նախաշավղի» համար: Զեր կարող
արդյոք այս առաջաբանը գրվել հետո, այսինքն՝ գրքի
ձախորդ տպագրությունից հետո, յերկրորդ «Նախա-
շավղի» համար:

Պոռշյանի հիշողությունների մեջ, ինչպիս առա-
ցինք, խոսք կա «Նախաշավղի» և նրա առաջաբաննի
մասին: Նա, ճիշտ ե, աղոտ կ'ըպով, բայց այնուա-
մենայնիվ հիշում ե առաջաբանի ընդհանուր իմաստը:
Պոռշյանը առում ե, վոր այդ առաջաբանում Արո-
վյանն իր խոսքն ուղղած «Գիլիսոփա» ուսուցիչնե-
րին, խորհուրդ եր տալիս ավանդել հնչական յեղա-
նակով և դասատվությունը տանել աշխարհաբարով:

Հնչական յեղանակի մասին Արովյանի «Նա-
խազդեցության» մեջ խոսք չկա: Այդ մասին խոսվում
է աշակերտների համար գրված խրատում, վորը,
բարեբախտաբար, պահպանվել ե տպագրված մի հա-
տիկ որինակում: Պոռշյանը, ինչպես յերեսում ե, խը-
րատն ու առաջաբանը շփոթել ե իրար: Զարմանալի
ել չե: Մոտ կես դարը քէչ ժամանակ չե, վորպեսզի
ծերունի վիպասանի հիշողության մեջ աղոտած լի-
ներ մանկական հասակի տպագրությունները:

Բայց կա մի կարևոր հանգառանք: Պոռշյանի
հիշողության մեջ մեխվել ե այն նուրբ հեղնանքը,
վորով Արովյանն առաջաբանում խոսում ե իր ժա-
մանակի պահպանողական ուսուցիչների մասին և
մաղրելով գիլիսոփա անվանում նրանց: «Նախազդե-
ցության» մեջ Արովյանը Պոռշյանի հիշած ձեռվ է
խոսում գրաբարապաշտ ուսուցիչնորի հետ:

ՆԱԽԱՇԱԻՒՂ

ԿՐԹՈՒԹՅԵԱՆ

՚ի պէտու նորավարժից

ԱՇԽԱՏԱՍԻՐՆԱԼ

Կ ԲԱԶԱՑՈՒՐ ԱԲՈՎԵԱՆՔ.



ՄԱՍՆ ԱՌԱՋԱՆ

1862

ՏՓԽԻՒ

Ի ՀԱՅ ՏՊՈՐԱՆԻ

Գ. ՄԵԼՔՈՒՄՆԱՅԻ ՆԻ Հ. ԷՆԴԻԱԶԵԱՆՑ.

Կարող ե պատահել, վոր Պռոշյանը այս շփոթած լինի վորեւ այլ առաջաբանի կամ նյութի հետ: Հաղիվ թե: Զպետք ե մոռանալ, վոր այնուհետեւ, այսինքն առաջին «Նախաշաղի» տպագրությունից հետո, արդ առաջարանը մնացել ե անտիպ և Պռոշյանը նրան ծանոթանալ չեր կարող:

Բայց մի այսպիսի հարց կարող ե առաջանալ. չե՞ վոր «Նախազգեցության» մեջ, կարծես, մի խուլ ակնարկ կա այն դժրախտ ճակատագրի մասին, վորին ինքը հանդիպեց առաջին «Նախաշաղի» տըպագրության ժամանակ: Զի՞ կարելի արդյոք այստեղից յեղրակացնել, վոր այդ առաջարանը, այսինքն «Նախազգեցությունը» առաջին «Նախաշաղիում» չե՞ յեղել և զրված ե հատկապես յերկրորդի համար: Դժվար ե ասել, թե Աբովյանի այդ արտունջքի պատճառն անպայման «Նախաշաղիուն» ե յեղել: Աբովյանը կտրող եր դժգոհել իր ճակատագրից ընդհանրապես, մի բան, վոր նա արել ե նաև «Վերքի», «Պարապ վախտի խաղալիքի» առաջարանում: Բայց և նա կտրող եր այդ առաջարանում տրտնջալ այն բանի՝ ամար, թե ինչ ձախորդությունների հանդիպեց իր «Նախաշաղիունը» մինև տպագրելը, ըստ յերեսութին, մտքով չանցկացնելով, վոր սարսափելին դեռ գալու յե հետո *):

*) Որ 1845-ին զրած մի թղթում (Յերկանի գավառական ուսումնարանի թղթերից № 13-ը) Աբովյանը գանգատվում է հեանյալ ձեռվ՝ «Այն գիրքը վոր յես կազմել եմ ազգիս պատանեկության համար, վորոնք արժանացել են ուշագրության և խրախուսանքի գիտության ճեմարանի կողմից, հաջողություն չեն գտել միայն թիֆլիսում» («Տեղեկագիր Գիտության և Արվետի ինստիտուտի», 1928, № 3, էջ 138):

Վերջապես, կարելի յե հարցի քննությանը մուտքած և ուրիշ կողմից:

«Նախազդեցությունը» պահպանվել ե, ինչպես առացինք, յերկրորդ «Նախաշավղի» ձեռագիր որինակում: Յեթե ճիշտ ե մեր յենթագրությունը, վոր այն յեղել ե նաև առաջին «Նախաշավղի» առաջաբանը, ուրեմն Արովյանն իր գրքի տպագրության ձախորդություններից հետո կազմելով մի նոր «Նախաշավղի» այն արտադրել ե յերկրորդի համար: Հարց ե ծագում. միթե Արովյանը պետք ե անսլայման նույնությամբ արտագրեր առաջաբանը նոր պատրաստվող գրքի համար: Անշուշտ կարող եր նույնությամբ արտագրել, բայց կարող եր և վորոշ մշակման յենթարկել: Արդյոք մշակելիս նա չեր կարող՝ նկատի ունենալով առաջին «Նախաշավղի» ձախորդ տպագրությունը՝ «Նախազդեցության» մեջ մտցնել այդ ակնարկը, ցանկանալով գեթ այդ ձեռով իր գժգոնությունն արտահայտած լինել: Ինարկե կարող եր:

«Նախաշավղը» մինչև տպագրության հանձնը վելը, ինչպես յերեսում ե, անընդհատ փոփոխությունների յե յենթարկվել: «Նախաշավղի» պատմությանը վերաբերող մի քանի փաստաթղթերում *) հիշված են այնպիսի նյութեր, վորոնք գրքի տպագրված որինակում չկան: Արովյանը, ինչպես յերեսում ե, մասամբ հաշվի յե նոտել գրքի հակառակորդների դիտողությունների հետ: Յերկու նյութ, վորոնք հիշված են փաստաթղթերում, բայց դուրս են մնացել գրքից:

*) Տես՝ Թիֆլիսի գիմնազիայի մանկավարժական խորհրդի 1849-ի դեկտեմբերի 22-ի նիստի արձանագրությունը

գտնվեցին Արովյանի անտիպալ թղթերում: Դրանցից մեկը «Վերջին հրաժարական քաջազօր Արքային Հեռակալի» ձեռագիրն ե:

Բերում ենք նյութն ամբողջությամբ:

«Վերջին Հրաժարական ՔԱՋԱԶՕՐ ԱՐՔԱՅԻՆ
ՀԵՐԱԿԱԼԻ

Քաղաքն Տիֆլիս դղրդայ: Զայն աղաղակի աղիուղում լալեաց զամենայն սիրու մորմոքէ: Սևագունդ զօրքն Պարսից շրջապատին ամենուստեք: Սուր անուղորմ թշնամեաց փողոտէ զորս և գտանէ: Որդիի լան և ողբան զծնողա: Սիրելիք և բարեկամք զմիմեամբք փարեալ՝ է զի գերութեամբ զրկին՝ ի միմեանց, և է զի սրախողիսող կենուաքաղեալ՝ անդէն և անդ՝ ի գիրկու ծնողացն ավանդեն զհողիս: —՝ ի միջօրէի,՝ ի տեսիլ քաղցանշոյլ արեգական ձառագայթից՝ շամանդաղ ծխամած հրակել շինուածոց՝ ամբարձեալ բարձրացեալ ընդ օդու իբրև զամպս միգապատա՝ զտեսարանն ծածկե սպալից: Արիւն անմեղաց յորդէ գետօրէն ընդ ամենայն փողոցա՝ և չիք ոք՝ որ զողորմելեացն զգացեալ զօրհաս,՝ ի թիկունս հասցէ տիրաբար: Քաջամարտիկ զօրքն վրաց՝ զվերջինն վատնեալ զօրութիւն հոկայական և դիմադարձ եղեալ միմիսայն բազմութեան թշնամեաց՝ փախստեայ տաքնապին զերծանիլ յանընկճելի բոնութենէն մահաճրաւէր օրհասին:

Եւ արքայն գրտվագութ զվերջինն սպասեալ ճիգն զորութեան, այլ ոչ կարացեալ դիմագրաւ լինել բռնակալու ամբոխին՝ ելանէ ընդ քաղաքն և՝ ի կոկիծ դառնութեան սրտին՝ հառաջէ ցաւօք: — Կաց

բարեաւ՝ Աթոռանիստ իմ քաղցր՝ յորում անցուցի
զաւուրս այնքան վայելչարարս կացէք բարեաւ՝ լե-
րինք ցանկալիք՝ յորոց դէմս յերբեմն արեգակնախայլ
ճառագայթէրն շուք փառաց և քաջագործութեանց,
այժմ անզօրացեալ բակկին իմոք Դու հերքնս զիս
սառնադէմ. ծննդարան իմ սիրելի՝ զորս արեամբ
կենաց պաշտպանեցի: Դուք սպառնայք ինձ անդթա-
բար զկորուստ անձողարելի, այլ զինչ կարացից
ձեզն պատասխանել՝ ժաղովուրդ իմ տարաբախտ:
Ընդէ՞ր ոչ հասանե շանթ մի յերկնից սպառել և զիմ
ընդ ձեր կենաց՝ անզօր շունչ: Զայն լալեաց մղձէկ
զիմ սիրս: Արիւնն թանկագին՝ զոր իմոլս մինչև
ցարդ ինամեալ պաշտպանեցի՝ խառնեալ հոսի ընդ
քեզ՝ զետ զու կատաղի, և զու լոռութեամբ ասպնջա-
կան լինիս նմա: Ո՞հ, ո՞ւր այժմ գաղարեցայց, ո՞ւր
լացից զաւուրս իմ գառնազինս: Դ; մեցից ի լերինս,
այլ զի՞արդ կարացից թողուլ զմայրսն սրբազան՝
ուր հանդին ոսկերք արժանայիշառակ նախնեաց
իմոց: Նախնեացն իմոց՝ որոց չե՞մն արժանի և որդի
անզամ անուանիր: Զինչ այս ցառումն բարկութեան
քո երկինք զթառատ. զմէ ի՞նձ միայն այս վիշտ
մահանրաւելր... Այլ զի՞նչ օդուին բանք իմ և
աղետք, երթիցնք աստի՝ ընկերք սիրելիք: Խոյն
տացուք՝ ի սահմանս հեռաւորս: Սառնադիմ լերինք
կատկառեան լիցին մեզ բնակարան, մինչե անցցէ
բարկութիւն տեսան:

* *

Զայն աղաղակի որբոց և այրեաց փակէ զլուլիս.
Դղբայ Տփիսիս, ծփան ընակիչք՝ ի հեղեղ արեան:

Երքայն չերակլէս քաջ նիզակակցօք յողբաձայն
լալիս թողուր Աթոռ՝ Կալսէթեան յանտառս լինի
ապաստան: ·
Դու տուն տաղնապի հայը զորդի, դտուն մոռանայ,
թափչի, եւ սուր սեագունդ գաշնաշունչ պարսկաց կատաղի
անհնար: Զորդի՝ ի ծնողաց, գհարսն յասագաստէ վարէ յիւր
գերի Աղայ Մահմադ—խան անսիրտ բռնաւորն
անողորմաբար: · Ի տանէ՝ ի տուն մտանեն դահիճք՝ մերկեալ
զսուսեր: Կոծ հեծեծանաց՝ զքարինս գալարէ՝ մանկանց,
տղայոց: Լերինք Տփիսիսայ հեկեկեն՝ ի ցավ բնտկչաց անսեր,
Այլ անօրինին սիրս արիւնարբու ոչ շարժի յողբոց:
Գանձք, հարստութիւնք, կալուածք թանկագինք
աւաը հարկանին: Ապարանք շքեղք, դահոյք փարթամաց թաղին՝
մոխիր: Զոր ձեռք մահաբերք կործանել կամ խլել անդ ոչ
կարացին: Անլադ հրդեհին եղե կերակուր և անդարձ ոճիր: ·
Մյուս նյութը, ինչպես յերեսում ե, Թիֆլիսի հայոց
դերեզմանցի մասին յեղած շարադրանքն ե: Մեզ թը-
զում ե, թե ալդ նույն հողվածն ե, վոր ձեռագրերի մեջ

պահպանվել եւ «Թիֆլիսի հայոց հանգստարանը» վերանագրի տակ 1914-ին տպագրվել եւ «Տարագ»-ում *):

Մի յերկու խոսք եւ 1862-ի «Նախաշավղի» և նրա ձեռագիր որինակի մասին:

Ինչպես առացինք, յերկրորդ «Նախաշավղի» լույս տեսալ հեղինակի մահից հետո: Հրատարակիչը, ենթաճանցը, գրքին կցել եւ մի «Ազդ», վորի վերջում առված եւ:

«Մեր ձեռին ունիմք այս «Նախաշավղի» և յերկրորդ հատորը, վորը և գրոց լեզվի ժերականությունը աշխարհաբար լիզվով բացատրված, նույնակես նոր և հեշտընկալ յեղանակով, վոր և խոստանում ենք մոտ ժամանակում ի լույս ընծայել մեր սիրելի ազգի մանկանց ոգտի համար **):

Ենթաճանցը ինչ-ինչ պատճառներով իր խոստումը չկատարեց. «Նախաշավղի» յերկրորդ մասը, վորը ամբողջապես զբարարի քերականությանն և նվիրված, մնաց անտիպ:

«Նախաշավղի» պատմության համար նյութեր ժողովելով, Արովյանի թղթերի մեջ գտանք գրքի յերկրորդ մասը, այսինքն քերականությունը լրիվ և ամբողջ: Իսկ առաջին, այսինքն՝ հրատարակված մասից՝ պահպանվել են միայն պատառիկներ: Սակայն վերջերս ՀԽՍՀ Գրական Թանգարանը ձեռք բերեց «Նախաշավղի» այն ձեռագիր և ամբողջական որինակը, վորից ենթաճանցը պատրաստել եւ իր հրատարակությունը: Տպագիր և ձեռագիր որինակների առաջին համեմատությունը ցույց տվեց, վոր

*) «Տարագ», 1914, № 1 հջ օ-8:

**) «Նախաշավղի», Տիֆլիս, 1862:

հրատարակիչը շատ ել հարազատ չի մնացել ձեռագրին: Ենթաճանցը գուրս եւ թողել «Նախաշավղիցությունը», վորով Արովյանը, ինչպես յերկում ե, կամնցել և բանալ յերկրորդ «Նախաշավղի» ևո:

Բացի այդ առաջաբանից՝ հրատարակիչը միանգամայն անհառկանալի պատճառներով գուրս եւ թողել մի չափածո զրվածք, վորն հանրագումարի յերերում Արովյանի մանկավարժական ըմբռնումները: Ահա այդ բանաստեղծությունը, վոր նույնպես առաջին անգամն ել լույս տեսնում:

Երեխային շա'տ է թոթով լեզուաւ ճառել,
Զոր նշմարէ և տեսանէ նա շուրջ զիւրեւ:
Բիւրատեսակ գոն առարկայք նմա ակներն,
Զոր քաջ նկատել ովա՛րտ է նմա և որոշել:

Երկինք ւերկիր են միշտ նմա դպրոց բազմիմասու:
Անթիւ ոտեղծուածք որոց գոյն, ձև և գաղափար
Հարկ է նախ մեզ զգայարանօք ըերել 'ի յայտ,
Ապա 'ի միտս ըմբռնել քաջ գնոցայն տիպար:

Ընդէ՞ր 'ի մթին աղջամդջի թափառիլ տալ
Մատաղ մանկանմ որում չէ յայտ դեռ մերձակայն:
Տնւը նմա զննել և ճանաչել և իմանալ
Զնպատակ, զորպիսութիւն և դպէտ նոցայն:

Քերանացի միայն շաղփաղիկ զանգիր սերտեալն,
Կրկնել զբառս, որոց իմաստք չե՞ն նմա յայտնի,
Է բարբանջել և զողանջել, այլ ոչ զգալ
Եւ խանգարել զհանձար մտացն բանականի:

Միաք ստեղծեն նախ զհնչմունս և զձայն բառից,
Յարտահայտել զեռանդն հոգւոյ և զմեր կարիս.
Ի հասանիլ մանկանն յարբունս իւրոց ըղձից,
Ինքնին խնդրէ և գտանէ բառս պիտանիս,

Կալ զդիւրագինն միշտ ճանապարհ՝ ի քոյդ ուղի:
Անգայթ ելցիս անդ՝ ի նուատակ քո ծայրագոյն:
Այլ աստանդելն ածէ՝ ի տուն զքեզ խաւարի,
Զքեզ մանուկ իմ՝ որոյ միտք դեռ չե՛ հաստատուն:

Միանդամայն պարզ ե, վոր Ենֆիաճյանցի այն
խորքերը, թե «Ժամանակակից հեղինակի [Աբովյանի]
աշխատասիրությունը ցանկացանք մաշող և ջնջող
ժամանակի ձեռից թափել *), հավաստիացում ե լոկ:
Ասենք, թե ինչ-ինչ հանգամանքներ արգելք յեղան,
վոր նա իր խոռոտումը կատարի և «Նախաշավողի» յերկ-
րորդ մասը՝ քերականությունը հրատարակի, իսկ ի՞նչը
կարող եր խանգարել նրան բարեխիղճ հրատարակիչ
լինել, այսինքն «Նախաշավողի» առաջին մասը հրա-
տարակել այսպես, ինչպիս հեղինակը թողել ու և վոչ
թու այնպես, ինչպիս ինքը, Ենֆիաճյանցը, կամեցել եւ

*) «Նախաշավողի», Տփիսիս, 1862, տես՝ «Ազգ»-ը՝

ՄԱԶԵՆԱԳՐԱԿԱՆ ՑՍՆԱԵՐ

1. Ց Ա Ն Կ

«Նախաշավողի» մասին յեղած նյութերի

- | | |
|--------------------|---|
| 1. Տեր—Ազարյան Մ., | <i>1861</i>
«Մի քանի խոսք Ազգվանի վերա»
«Կոռունկ», թիվ է, եջ 541 |
| 2. Ենթիանյանց Հ., | <i>1862</i>
«Նախաշավողի» կրթութեան ի պէտո
նորավարժից», «Կոռունկ», թիվ լ, եջ
658 |
| 3. Պողյան Պ., | <i>1889</i>
«Դյուղական վարժապետներ», «Արձա-
գանք», № 2, եջ 38 |
| 4. Լեռ, | <i>1911</i>
«Ղազարոս Աղայան», «Հորիզոն», № 154 |
| 5. Աբեղյան Ա., | <i>1912</i>
«Խաչատրու Աբովյանից մի եջ», «Հո-
րիզոն», № 127 |
| 6. Լեռ, | <i>1914</i>
«Պատմություն Յերևանի հայոց թեմա-
կան հոգևոր դպրոցի», 1837—1912,
Թիֆլիս, եջ 232—3 |
| 7. Աղայան Մ., | <i>1922</i>
«Նոր ուղղագրության պատմական
ակտը», «Խորհրդային Հայաստան», № 78 |



1838

8. Եսիազիզ ՑԵ.,
«Խաչատուր Աբովյանը» (Յերկանի գա-
ֆառական դպրոցի տեսչության 1843—
1848 թ. թ. թղթերի և ակադեմի ու Խ-
մբեհնի նամակների հիմունքով)։ «Տե-
ղեկազիր ՀԽՍՀ Դիտության և Արվես-
տի հնագիտություն», № 3, էջ 138—141

1938

9. Գրմիելյան Ա.,
«Աբովյանի մանկավարժական գործու-
նեության մասին», «Խորհրդային դպրո-
ցոց», № 48, 50

10. Գազայյան Դ.,
«Խաչատուր Աբովյանը վորպես ման-
կավարժ», «Խորհրդային դպրոց», № 2
66, 68

1939

11. Մուրադյան Հ.,
«Խաչատուր Աբովյանի լեզվական հա-
յացքները», «Խորհրդային գրականու-
թյուն», № 7, էջ 73

12. Մուրադյան Հ.,
13. Զարյան Ռ.,
«Աբովյան» Յերկան, էջ 24
«Աբովյանի կյանքը» (Խ. Աբովյանի
«Ընտիր յերկերի» առաջաբանը), էջ՝
XXXII; Նույնը՝ առանձին գրքով, Յե-
րկան, էջ 77—82

1848

2. Ց Ա. Կ

19-րդ դարի առաջին հիմնամյակում յեղած այբբենարանների

1. 1804
Այբբենարան համառօտ, Վենետիկ
2. 1809
Նոր տեսակ այբբենական, Մադրաս
3. Բարդասեան Գէվորգ, Այբբենքնք Հայոց, Մադրաս
4. Զերկում Աւես 1811
Նոր տեսակ այբբենական, Կալկաթա
5. 1815
Նոր այբբենարան, Տրիեստ
6. 1819
Այբբենարան Հայոց, Վենետիկ
7. 1824
Այբբենարան կամ Աղանուրեան կարդ-
ուսմանց, Կալկաթա
8. 1825
Այբբենքնք Հայոց, Տվիկու
Ակիզին ընթերցանութեան հայկական
տառից, Վիեննա
10. 1826
Դուռն դպրութեան հայկական լեզուի
կոլուս
11. Վարդան Վարդան, 1827
Այբբենարան, Մոսկովա

12. Փետմալնեան Գրիգոր, Այբբենարան, Մոսկուա

1831

13. Մկրտչումետն Կարապիս, Մարդատուն մանկանց, Կալկաթա

1834

14. Հայնակ և Մաճոնովի, Վիեննա

1837

15. Բանալի ընթերցման կամ այբուբենարան, Զմյունիա

16. Խուղածեան Աղէսանդր, Գիրք նախալրթութեան Հայկազնեան լեզուի

1838

17. Արքանեանց Հովհաննէս յիվ Դավիթ, Այբբենարան Հայոց 'ի պէտս նորուստն մանկանց, Տիկնիս

18. Պոպով Կարապիս, Նախադուռն վարժութեան, Մոսկուա

1839

19. Սումիասեան Գրիգոր, Այբբուբենք Հայոց և Ռուսաց, Մոսկուա

1840

20. Թաղիաղիեան Մեսրովը, Մեսրովլեան այբբենարան, Կալկաթա

21. Տհոր այբբենարան, Շուշի

1841

22. Դավիթեան Մարտիրոս, Վենետիկ

1842

23. Այբբենարան, Տիկնիս

24. Համառօտ այբբենարան, Վենետիկ

1845 (*)

25. Արքիվեան Խաչատրու Նախաշաւիդ կրթութեան 'ի պէտս նորավարժից, Տիկնիս

26.

1847
Բանալի ընթերցանութեան Մեսրովլեան տառից, Եաշ

1850

Նոր այբբենարան և հեղարան, Վենետիկ
Նոր այբբենարան և հեղարան, Վենետիկ

Այբբենարան, Վիեննա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ցերկու խոսք
2. Առաջաբան
3. Նախաւակիդ կրութեան ի պէս նորավարժից
4. Մանրություններ

Ն յ ո ւ թ ե ր «Ն ա խ ա ս ա վ դ ի » պ ա ս մ ո ւ ր յ ա ն հ ա մ ա ր

1. ՑԵՐՔԻ և գրվել «Նախաշավիղը», Առաջին տպագրության
փորձը
2. «Նախաշավիղը» Գիտությունների Ակադեմիայում
3. «Նախաշավիղը» Թիֆլիսի մանկավարժների դատաստանի առաջ
4. «Նախաշավիղը» տպագրությունը
5. Ցերկու «Նախաշավիղը»

Պ ա ս ե ն ա զ ր ա կ ա ն ց ա ն կ ե ր

1. Ցանկ «Նախաշավիղի» մասին յեղած նյութերի
2. Ցանկ 19-րդ դարի առաջին հիմնամյակում յեղած այբբենա-
բանների

Տեխ-խմբագիր՝
Ստ. Ալբունյան
Մրացրի՝
Ա. Արզամանյան
Կոնցրու սրբագրի՝
Յն. Տ.-Մինասյան
Կլշշները պատրաստել են ընկ. ընկ. Հ. Մինասյան,
Ք. Համավերդյան
Դասկանի լիազոր՝ Զ-1078 Հրատ. 4924
Պատվեր 523. Տիրաժ 2000
Հանձնված և արտադրության 22 V 1981 թ.
Ստորագրված և տպագրութ. 16 VI 1939 թ.
Հայաբետրատի տպարան, Երևան, Լենինի 65

299 64

7

ՀՀ Ազգային գրադարան



NL0249298

7691